


ԳՐԵՄԻԱ Ս. ՔԵՀԵԱԵԱՆ

ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ  
ՏՐՈ.Մ.Տ.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ԼՕՍ ԱՆԴԵԼՈՒ, ՔԱՂԻՖ.

1927

ԳԻՆ 50 ՍԵՆԹ

THOS.  
ARMENIA  
1000 E.O. H.O.  
LOS ANGEL



891.99  
8 - 38

# ԳՈՅՈՒԹԵԱՆ ՂԱՅՔԱՐԸ

ՏՐՈ. Մ. Ա.

ԶՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ


ԱՌԱՆԴՈՒԱԾ 1914—19-Ի ՀԱՅ ԿԵԱՆՔԵՆ

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Գրեց

ԵՐԵՄԻԱ Ս. ՔԵԶԵԱՆԵԱՆ


F. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



YANKEE PRESS

LOS ANGELES, CAL.

1927



## ՀԵՂԻՆԱԿԻՆ ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐԸ

Դ Ե Կ Ա Խ Ա Հ Ա Յ Ա Հ Ա Յ Ա Հ

1. Ասպետը եւ իր Որսորդը,  
Թունդ Հայրենասիրական Տրամա:
2. Մանուկին Արկածները,  
Իբր Քաղաքաց Կարճ Պատմութիւններ:



## ԶՕՆ

ԿԸ ԶՕՆԵՄ ԲՈԼՈՐ ԱՆՈՆՑ, ՈՐՈՆՔ ԱՆՎԱՐԱՆ ԻՆԿԱՆ  
ԳՈՅՉՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԵԶ

-----

## ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Դուք պատելիներ իմ, մընացիք անքաղ,  
Բայց, նընջեցէք միւս անխըռով ու անվախ,  
Քանզի ուժ կամ կանուխ ձեր տիրիմներուն  
Վըրայ պիտ՝ հաստատուի Հայ գահը սիրուն...

Եւ, նընջեցէք դուք, միւս նընջեցէք խաղաղ,  
Զի ուխտով պիտի գամ ձեզի անյապաղ,  
Զեր անիւնին հետ կեանքս ալ վրիժառու  
Հայրենիքիս ազատութեան զոհելու...



# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ



ԳՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԼ  
ի լոյս ընծայելով կը  
յանձնենի զայն ամերի-  
կահայութեան թարգ-  
ման հանդիսանալու հա-  
մար Հայ ճգնաժամային  
տարիներու ընթացքին  
մեր ժոյք ու եղբայրնե-  
րու այն ահաւոր պայ-  
քարներուն, որոնի մը դ-  
ռեցան ուզմադաշտեն  
սկսելով մինչեւ թրժա-  
կան հարեմներու մէջ:

Այս առթիւ պարտի կը սեպենի յայտարա-  
րել՝ թէ քնառ յաւակնութիւն չունինի իբրեւ  
«հեղինակ» պարծենալու այս թատերգու-  
թեան, որ Հայ ժաշարի ժողովուրդը ինի իր  
տոկուն նկարագիրով կերտած է ի գին ան-  
սահման զոհողութիւններու, եւ կը գոհա-  
նանի միայն, դեմքերն ու դեպքերը ներշըն-  
չումներու տակ իրարու միացնելու համեստ  
աշխատութեամբ։ Եւ այս իրողութեան առ-  
ջեւ յուսալից ենի, որ ԳՈՅՉՈՒԹԵԱՆ ՊԱՅ-  
ՔԱՐԼ պիտի գրաւէ իր արժանի տեղը Հայ  
բեմին վրայ։

ՀԵՂԻՆԱԿ

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

---

ԹՈՐՈՍ,	Ազնուական հայ մը, 60 տարեկան
ԹԱԳՈՒՀԻ, ՊԵՏԱ	Թորոսին կինը, 55 տարեկան
ՊԵՐՁ, ԶԱՐԵՀ,	Թորոսին որդին, որ զինուոր է
ՊԵՐՁՈՒՀԻ, ԱԼԻՍ,	Թորոսին որդին, 17 տարեկան
ԶԱՊԵԼ,	Թորոսին դուստրը, 10 տարեկան
ԳԵՂԱՄ, ՎԱՀԵ,	Պերճին նշանածը
ՀԱՅՐԻԿ,	Զարեհին հասակակից
ԶԵՔԻ, ՄՈՒՀԱՄՄԵՏ,	Պերճին ընկերները տարիքով մեծ
ՄՈՒՀԱՄՄԵՏ, ՄՈՒԽԹԱՐ, ՄԱՀՄՈՒՏ,	Պերճին ընկերներ
ՕՄԱՐ,	Մուխթարին ծառան
ՔԵԱՄԻԼ, ՍԻՒԼԵՅՄԱՆ,	Մուխթարին եւ Մահմուտին մարդիքը
ՃԱՖԵՐ,	Ժանտարմա մը
Ա. Եւ Բ. ԶԱՅՆԵՐ,	Թուրք զինուորականներ, դուրսէն

---

**ԾԱՆՈԹ.— Տարիքները կը ներկայացնեն 1915-ի թուականը բացի ՀԱՅՐԻԿ-ԷՆ, որունն է 1919-ի տարիքը:**



«ԱՊԱՌՈՒՐ».—Միւս պիտի սպանել... (էջ 7)



# ԳՈՅՉԻԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ

## ՆԱԽԵՐԳՈՒԹԻՒՆ



ԵՂԻ կ'ունենայ առանց տեսարանի բացման վարագոյրին առջեւ։ Ժամանակը 1914-ի առունը եւ առաւտեան լուսարացին։ Մութին աստիճանաբար բարձումով Պերճն ու Ալիսը կը տեսնուին քով քովի նստած։ Պերճ իր զինուորական պիտոյքները կոնակին համբորդի մը տպաւորութիւնը կը քողու։

Հեռուէն զինուորական փողի խօլ ձայներ կը լսուին։

**ՊԵՐՃ.** — (Սիրային յուզմունիքով) **ԱՀԱՌԱՍԻ'Կ աՀԱՋԱՆԳԸ,** որ ամէն ոք պարտականութեան կը հրաւիրէ։

**ԱԼԻՍ.** — (Արցունիքով) **Ո՛Հ, ՄԻՐԵԼԻՍ, ՕՐԷՆՔԸ** ամէն բանէ վեր է, սէրս կարող չէ քեզ կեցնել։ **Ա.ՅՈ'**, ժամանակի մը համար իրարմէ պիտի բաժնուինք, բայց, սիրտերնիս երբէ՛ք։

**ՊԵՐՃ.** — (Ուժգին Ալիսը գրկելով) **ՍԵՐԷՔ'**, այդ դառն արցունքներդ, պաշտելի՛ս։ Ժամանակի հոլովումով բաղդը պիտի ժպտի մեղի անշուշտ, ու կրկին պատեհութիւն պիտի ունենանք զիրար ողջագուրելու։ (Կը համբուրէ զայն եւ ֆանի մը քայլ կ'առնէ դէպի ձախ։ Ճիշդ այս պահուն աջ կողմէն սրինգի մը մեղեղին կը լսուի, որ կը նուազէ սիրային եղանակ մը։ Երկուքն ալ ազդուած՝ գլխիկոր, կ'ունիկնդրեն զայն եւ եղանակին վերջանալէն յետոյ Պերճ ետ ետ նայելով կը հեռանայ ձախ կողմէն։)

**ԱԼԻՍ.** — (Աչքերը Պերճին ետեւ սեւելով, արտասուխառն եւ սիրային ուժգին արտայայտութեամբ) **Ո՛Հ, ՊԵՐՃ, ՃԻՇՄ պիտի սիրեմ քեզ...** **ՄԻՇՄ պիտի սպասեմ...** **ՄԻՆՉԵւ գերեզման...** (Կամաց քայլերով կը հեռանայ աջ կողմէն։)



## ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

Ա. ՏԵՍԱՐԱՆ

ԹՈՐՈՍ Եւ ԶԱՐԵՀ



ԵՍԱՐԱՆԸ կը բացուի Թորոսին սենեակներէն մէկուն մէջ. համեստ կերպով կահաւորուած ու զարդարուած։ Թորոս նստած է սեղանին քով, ընկնուած գլխիկոր. իսկ Զարեհ՝ խիստ յուզուած, կը նայի պատին վրայ կախուած ազգային յայտնի դէմքերու պատկերներուն։

Ժամանակը 1915-ի ամրան սկիզբն է, եւ առենը իրիկուն։

**ԹՈՐՈՍ. — (Շտկուելով) Զարեհ, տղաս, այս իրիկուն քեզ բոլորովին փոխուած կը տեսնեմ։ Գիտեմ շատ յուղուած ես, բայց այդ բոլոր հոգերը ինձ ձգելով մայրդ եւ քոյրդ միսիթարելու էիր։ Ես կ'ակնկալէի, որ այս սեւ ու տագնապալից օրերուն մեզի օրինակ հանդիսանայիր քու քաջութեամբդ, եւ մեզ խրախուսէիր շարունակ։ Որդիս, չես գիտեր թէ ի՞նչ սեւ բաղդ կը շրջի մեր ցաւոտ գլխուն վրայ։**

**ԶԱՐԵՀ. — Այո՛, հայրիկ, որոշ է թէ այս գիշեր չլուսցած այդ անիծեալ բաղդին պիտի մատնուինք։ Զեմ գիտեր, թէ ի՞նչպէս կարելի է միսիթարել այն խեղճերը, որոնք եւս կ'զգան բաժակին դառնութիւնը։ Եւ դուն, հայրիկ, որ զիս այս վիճակին մէջ կը տեսնես, գիտցի՛ր սրարտականութիւնն է, որ կոչ կ'ընէ ինձի վաղուան գոյութեան պայքարը մղե-**

լու։ Դուն եւ մայրիկս հաղիւ կրնաք տոկալ ու զձեզ դուրս հանել այս օրհնեալ տան շէմքէն, իսկ խեղճ Պերճուհին օգնութեան կը կարօտի ու չի կրնար քայլ մը իսկ առնել, ինքնիրեն, անապատի տաք աւազներուն վրայէն։ Հայրիկ, ջուր աղաղակող բերաններուն ո՞վ ումպ մը ջուր պիտի հասցնէ ծով տանջանքները մեղմացնելու համար։ Զեր յողնած պահուն ո՞վ ձեր թեւերէն մտած՝ ձեզ պիտի առաջնորդէ անդութներուն հարուածներէն ու կանխահաս մահէն փրկելու համար։ Բսէ՛, հայրիկ, խնդրեմ ըսէ՛, ո՞վ . . . եթէ ոչ ես, եւ դուն զիս կը խրատես որ այս բոլոր հոգերը քեզի ձգելով անհոգ մնամ։ Հայրիկ, ես ո՛չ վախկոտ եմ, ո՛չ ալ պարտականութենէ խուսափող։

**ԹՈՐՈՍ. — Այո՛, տղաս, Աստուած ոյժ պարգևէ։**

**ԶԱՐԵՀ. —** Դուն հայրիկ, մինչեւ այսօր քու պարտականութիւնդ լիուլի կատարած ես մեզ հանդէպ, ու ասկէ վերջ այդ նուիրականութիւնը ինձ փոխանցուած է բոլոր պատասխանատուութեամբը։ Ես ալսպէս կ'զգամ եւ այդ հոգերն էին, որոնք զիս ճաշէս զրկելով այս անբաղձալի վիճակին մատնեցին։ Հայրիկ, թէ որ մեծ եղայրս, Պերճը մեզի հետ եղած ըլլար, բնականաբար այդ պարտականութեանց նախապատուութիւնը իրեն պատկանելով գուցէ այդ մասին անփոյթ եղած ըլլայի, բայց, իրեն զինուորագըրուելէն վերջ՝ մեզ այս կերպով անապատներուն մէջ կ'ուղեն փճացնել։

**ԹՈՐՈՍ. — (Ինքնիրեն) Ի՞նչ ասպետական զգացումներ, Աստուած իմ։**

**ԶԱՐԵՀ. —** Հայրիկ, այդ չէ դեռ բոլորը, եթէ պատահի որ մեզ ալ մեր նախորդներուն պէս այրերը կիներէն զատելով տարբեր ուղղութեամբ քշեն, կամ աւելի ճիշդը՝ տեղն ու տեղին ջարդեն մեզ, ծերունի մայրս ու մատաղ քոյրս ո՞ւր պիտի մնան, եթէ ոչ

ՀՐԷՇՆԵՐՈՒՆ ոտքին տակը . . . (Յուսահատ կ'իյնայ աթոռին վրայ) :

**ԹՈՐՈՍ.** — (Զեռքը Զարեհին գլխուն դնելով) Շա՛տ ապրիս, անգին զաւակս, Տէրը քեղ օրհնէ՛ եւ կամք ու կորով պարզեւելով թշնամիին սուրը վրայէ՛ հեռու պահէ, եւ անսասան մնաս :

**ԶԱՐԵԴ.** — (Յանկարծ վեր ցատքելով ինքնիրեն) Թշնամիին սուրը վրայէ՛ հեռու պահէ . . . ես հօրս օրհնութիւնը միշտ առեր ու վայելեր էի, բայց այս վերջինը բոլորովին տարբեր էր, որ իր անուշ լեզուով թոթովեց : (Զեռքը նակտին մտածելով) Թշնամիին սուրը վրայէ՛ հեռու պահէ . . . Այո՛, կը յուսամ հօրս այս օրհնութիւնն ալ պիտի վայելեմ : (Կը բառուի անկիւն մը եւ մտազբաղ կը նստի) :

**ԹՈՐՈՍ.** — (Հետ նայելով դեպի Զարեհ) Դուն, բարի զաւակս, շատ պիտի ապրիս եւ երջանիկ օրեր տեսնելով այս բոլոր տանջանքները պիտի մոռնաս : Երանի՛ քեզի, ազնիւ զաւակս :

## Բ. ՏԵՍԱՐԱՆ

### ՆՈՅՆՔ ԵՎ ԹԱԳՈՒՀԻ

Թագուհի ներս կը մտնէ ծանր եւ մտատանջ :

**ԹՈՐՈՍ.** — Ո՞ւր է պղտիկը, թագուհի, կը յուսամ հանգստացաւ :

**ԹԱԳՈՒՀԻ.** — Այո՛, վերջապէս կրցաւ քնանալ, անմեղը դէպքերէն այնքան ազդուած էր, որ նոյն իսկ քունին մէջ կը դողար տարօրինակ ցնցումներով :

**ԹՈՐՈՍ.** — Խեղճ գառնուկս, ծաղիկ հասակիդ մէջ ահն ու սարսափը քեզի ընկեր . . .

**ԹԱԳՈՒՀԻ.** — Թորոս, նախախնամութիւնը ի՞նչ առաքինի որդի մը պարզեւած է մեղի, կարծես պահ մը մոռցնել կուտաչ կանխահաս բոլոր հոգերը . դուռը

կանգնած մտիկ կ'ընէի իր խօսքերուն։ Զարեհս շատ  
բարի է, Աստուած պահէ ու պաշտպանէ զինքը։

**ԹՈՐՈՍ. — Ամէն:**

**ԶԱՐԵՀ. —** (Ոտք ելած ծնողաց կը մօտենայ,  
որոնի սեղանին քով նստած են, եւ երկուֆին միջեւ  
նստելով թեւերը վրանին կը պարզէ եւ փոխն ի փոխ  
գրու երեսնին նայելէ վերջ) Հայրի'կ, այս վերջին  
ժամուն կարդ մը հարցումներ ունիմ քեզի ընելիք,  
որոնցմէ առաջինը՝ կ'ուղեմ քեզմէ հասկնալ՝ թէ  
իրաւ պէ՞տք է որ մենք կամաւոր կերպով թշնամիին  
հրամանին հպատակինք։

**ԹՈՐՈՍ. —** Ի՞նչ կրնանք ընել, զաւակս, հպատա-  
կիլը կատարեալ փորձութիւն մըն է, իսկ ընդդիմու-  
թիւնը մահ ըսել է, ինչպէս որ նմոյշները տեսանք  
ոչինչ դէպէրով։ Հետեւաբար մեզ կը մնայ երկու  
չարեաց փոքրագոյնը ընտրել։

**ԶԱՐԵՀ. — Բայց, Հայրիկ . . .**

Դուրսէն աղիողորմ ձայններ կը լսուին։

**ԹԱԳՈՒՀԻԿԻ. — Աստուած իմ, ի՞նչ են այս աղա-  
ղակները։**

Ձայնները կը լոեն։

**ԶԱՐԵՀ. —** (Պատուհանին առջեւ վազելով) **Մայ-  
րի'կ, դուրսը լոռութիւն կը տիրէ։** (Տեղը կուգայ)։

**ԹՈՐՈՍ. — Շատ կասկածոտ չըլլանք։**

**ԶԱՐԵՀ. — Հայրիկ, հարցումս չմոռնանք։**

Հեռուէն կանացի մարած ձայններ կը լսուին։

## Գ. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆՔ ԵՒ ՊԵՐՃՈՒՀԻ

**ՊԵՐՃՈՒՀԻ. —** (Գիշերանցով ներս կը վազէ  
սարսափահար պոռալով) **Մայրի'կ, մայրի'կ, Ալիւը,**  
**Ալիւը . . . կը վախնամ . . .**

**ԶԱՐԵՀ.** — (Անմիջապէս Պերճուհին գրկելով) *Ի՞նչ տեսար, Պերճուհի, միթէ՞ երազ էր տեսածդ,* մի՛ *վախնար, տես գիրկս ես:* (Քոյրը վար դնելով պատուհան կը վազէ, եւ վայրկեան մը սուր նայելէ յետոյ՝ դիւահարի պէս) *Ո՛հ, անպաշտպան աղջիկ...* *Դժբա՛ղդ...*

**ԹԱԳՈՒՀԻՆԻ.** — *Ի՞նչ է պատահածը, Զարեհ:*

Զայնը կը տարունակուի:

**ԹՈՐՈՍ.** — *Ուսկից է այդ թախծոտ ձայնը, Զարեհ:*

**ԶԱՐԵՀ.** — *Մեղմէ զատ բոլորն ալ փողոցները թափուած են արդէն:*

**ԹՈՐՈՍ.** — *Բայց, այդ կանացի ձայնը ի՞նչ է, որ սիրտս կը տաղէ:*

**ԶԱՐԵՀ.** — *Ալիսը, հայրի՛կ...*

**ԹԱԳՈՒՀԻՆԻ.** — *Ալիսը...*

**ՊԵՐՃՈՒՀԻՆԻ.** — (Մօրը փաքքուելով) *Այո՛, մայրի՛կ:*

**ԶԱՐԵՀ.** — (Զեռքը նակտին պատուհանէն դուրս նայելով) *Այո՛, Ալիսը... Մուհամմէտ Պէյը իր սենեակն է... խեղճը քաջաբար ինքզինք կը պաշտպանէ դազանին դէմ, բայց, մինչեւ ե՛րբ...* (Յանկարծ ցնցուելով) *Ահա՛ դաշոյնս, որ մանկութենէս ի վեր պահեր եմ յարմար առիթով գործածելու համար, այս է մինակ ժամանակը, եւ ա՛յս է պատեհութիւնը. պէտք է խեղճ աղջիկը ազատել դազանին ճիրաններէն. անդամ մը դաշոյնս իր սիրտը մխելէ վերջ, ա՛լ մահս հոգ չէ բնաւ: (Ոտքերը գետին զարնելով քաջաբար) *Ալ ինչո՞ւ ապրիլ, ա՛լ ինչո՞ւ կուրօրէն բաղդին յանձնուիլ:* (Դառնյնը մերկացուցած դուրս կը խոյանայ, դրան մէջ ոստիկան մը կանգնած կը գտնէ):*

## Դ. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆԻ Եւ ՀԱՍԱՆ

**ՀԱՍԱՆ.**— (Ասրբանակը Զարեհին կուրծքին դը-  
նելով) Ի՞նչ է պատահած, դրացի, ո՞ւր կը վազես,  
այդպէս դաշոյնդ մերկացուցած, եթէ անդէն եղած  
ըլլայի բնականաբար առաջին անգամ զիս պիտի ըս-  
պաննէիր տեղնի տեղին:

**ԶԱՐԵՀ.**— Քաւ լիցի, տէր իմ, պարտականու-  
թեան վրայ եղող պաշտօնեաներուն միշտ յարգանք  
ունիմ: (Դառնյալ կը նետէ մէկ կողմ):

**ՀԱՍԱՆ.**— Բայց, ի՞նչ էր նպատակդ, կեավուրի  
ձագ, ըսէ՛, շուտ ըսէ՛... **ԶԵ՛Կ** գիտեր որ այդ դարը  
անցեր եւ սուրն ու զէնքը Մարգարէին հաւատաց-  
եալներուն մինակ սեփականութիւն է դարձեր: (Խա-  
րազանով կը փորձէ զարնել):

**ԶԱՐԵՀ.**— (Վրէժխնդրական նայուածքով մը  
լուր կը մնայ):

**ՀԱՍԱՆ.**— Դուն քու լոռութիւնդ պահէ: (Զեռքե-  
րը ետին կապելէ վերջ) Այս էր քու ուզածդ. դուն  
ազատ օդ շնչելու արժանի չես, դնա՛, ճաթիր այդ  
ամուր կապին տակ: (Նախատինիքով ոտքի հարուած  
մը կուտայ:)

**ԹԱԳՈՒՀԻՉԻ.**— Զարեհ, հոգւոյս հատորը...

**ԹՈՐՈՍ.**— Որդի՛ս...

**ՊԵՐՃՈՒՀԻՉԻ.**— (Լալով) Եղբա՛յը...

(Բոլորը սարսափի են մատնուած:)

**ՀԱՍԱՆ.**— Կարծես լաց ու կոծ լսելու եկած եմ,  
շուտ ըրէ՛ք, այս վայրկեանիս ձեր տունն ու տեղը  
պիտի ձգէք անգամ մըն ալ չի վերադառնալու պայ-  
մանով: Երկար չեմ կրնար սպասել, արդէն շատ  
ուշ է:

**ԶԱՐԵՀ.**— Մայրի՛կ, եկուր կարօտու առնեմ վեր-

Ջին անդամ, զիտե՛մ, այս կապերէս չպիտի աղատիմ առանց հրաշքի: Ո՞չ, խեղճ Պերճուհի... հայրի՛կ...

**ՀԱՍԱՆ.** — Սա անպիտանը տե՛ս, ինք իր վիճակն ու ի՞նչ բաղդի ենթարկուելէն անտեղեակ՝ տակաւին հայր-մայր կ'աղերսէ: Ա՛լ մոռցիր. հայր, մայր բառերը, եւ դուն քու մեղքիդ վրայ լաց:

**ԶԱՐԵՀ.** — (Ասելութեամբ լեցուած) Հոգ չէ՛ թէ ի՞նչ է իմ մեղքս. Ես հայր-մայր կանչելէ չպիտի դադրիմ մինչեւ վերջ:

**ԹՈՐՈՍ.** — (Ծրարներ կապելով զբաղուած:) Հոգ չէ՛ թէ

**ՀԱՍԱՆ.** — Այս ծանր շղթային ներքեւն ա՛լ հայկան ցնդած մտայնութեա՞ն վրայ...

**ԶԱՐԵՀ.** — (Ընդմիջելով) Քու ժանդ շղթայիդ ծանրութիւնը չի կրնար հայ ոգին ընկձել:

**ՀԱՍԱՆ.** — Մինչեւ ե՞րբ:

**ԶԱՐԵՀ.** — Մինչեւ յաղթանակ...

**ԹԱԳՈՒՀԻԿԻ.** — (Զարեհին եւ ոստիկանին միջեւ կը նետուի վիճաբանութիւնը դադրեցնելու դիտումով: Պերճուհի մօրը ետեւէն:) Հոգ չէ՛ թէ

**ՀԱՍԱՆ.** — (Տնեցիներուն կը պոռայ) Դեռ ձեզի՞ պիտի սպասեմ. ինչ անհոգ ու սառած կեցած էք, շո՛ւտ, դո՛ւրս, դո՛ւրս այս տունէն:

**ԹԱԳՈՒՀԻԿԻ.** — (Ինինիրեն) Մեր տունէ՛ն, Աստուած իմ, այս ի՞նչ անդժութիւն...

**ԹՈՐՈՍ.** — Մէկ ըոպէ միայն, էֆէնտի:

**ՀԱՍԱՆ.** — (Ականջները մատով խցելով) Ա՛լ չեմ ուզեր լսել. արագ շարժեցէք՝ բարկութեանս չենթարկուած: Խիստ լուրջ գործ մըն է այս, որ պէտք է ճշգրիտ կերպով կատարուի:

(Թորոս եւ Թագուհի պատրաստուած ծրարները կ'առնեն: Պերճուհի մօրը ձեռքէն բռնած կը քալեն դէպի դուռը վտահար:) Պէտք չէ՛ որ այս

**ՀԱՍԱՆ.** — (Կատաղաբար անոնց ծրարները կը յափշտակէ եւ դէպի ներս նետելով) Պէտք չէ՛ որ այս

տունէն ասեղ մը իսկ վերցնէք, այս է վերին հրամանը: (Սուրբ մերկացնելով դուրս կը գտէ զանոնի աղաղակենրու մէջ):

---

### Ե. ՏԵՍԱՐԱՆ

ԱԼԻՍ ԱՌԱՆՁԻՆ

**ԱԼԻՍ.**— (Գիշերանցով հերարձակ ներս կը մտնի. դեպի պատուհանը վազելով) Այս ի՞նչ անսովոր աղմուկ է ուշ ժամանակ: (Քիչ մը դուրս նայելէ վերջ) Իրօ՞ք այդ հարուածները մարդկային էակներու վրայ կ'իջնեն: (Զեռֆերով աչքերը կը գոցէ): Ո՞հ, չեմ ուզեր այդ տեսարանը տեսնել... այս ի՞նչ բռնութիւն է, ի՞նչ սարսա՛փ: Ի՞նչ բռնադաղթ եւ երկա՛ր կարաւան... (աչքերը դեպի երկինք սեւենելով) Երկինքի պայծառ աստղեր, ի՞նչպէս կրնաք դիտել այս սրտաճմլիկ տեսարանը առանց այլայլելու. ինչո՞ւ չէք հարուածէր, չէք թափուիր մեր դահիճներու գլխին խորտակելով անոնց ծրագիրները. ինչո՞ւ կը ձգէք, որ մեզ զրկեն մեր օճախներէն, ուր մենք եւ մեր նախնիքը ապրած ենք դարեր շարունակ: (Առաջ գալով՝ սեղանին վրայ դրուած ծաղիկները կը գրկէ մեղմօրէն): Ո՞հ, անբիծ ծաղիկներ, եթէ երբէք բաղդը չունենամ վերադառնալու, դուք վկայ եղիք իմ սիրոյս եւ կարօտիս, պատմեցէք վիշտո, եւ իրեն տուէք վիրաւոր սիրտս... (անապարանքով) բայց, կարելի չէ երկար հոս մընալ, աճապարեմ՝ փորձանքի մը չենթարկուած: (արագ դեպի դուռ կը վազէ:)

---

### Զ. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆ ԵՒ ՄՈՒՀԱՄՄԵՏ

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.**— (հեւ ի հեւ ներս խուժելով Ալիսին կը հանդիպի դրան մէջ) Վերջապէս...

**ԱԼԻՍ.** — (Սարսափահար) Ո՞վ ես դուն:

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.** — Անհող եղիր, քեզ պիտի ազատեմ ստեղծուած դժոխքէն: Դուն քեզ բաղդաւոր նկատելու ես իմ հովանիիս տակ գտնուելուդ, գիտե՞ս ամբողջ նահանդը իմ հրամանիս ենթակայ է:

**ԱԼԻՍ.** — Անծանօթի մը պաշտպանութեան կարօտ չեմ երբէ՛ք, որ բոլորովին կեղծ է:

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.** — Բայց իմ պաշտպանութիւնս անկեղծ է քեզի հանդէպ:

**ԱԼԻՍ.** — Արեւուն գոյութիւնը ուրանալ կարելի՞ է միթէ: (Դուրսի ճայներուն ակնարկելով) **ԱՀԱՎԱ-** **ՍԻ'Կ** արդիւնքը. ես ալ անոնցմէ մէկն եմ եւ պէտք է անոնց հետեւիմ (կը քալէ դէպի դուռ):

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.** — (Ալիսին քեւէն բռնելով) Խենթ մի՛ ըլլար, աղջիկ, տես սա փափուկ կազմդ, տաք անապատի աւազներուն մէջ քու մահդ վայրկեանի մը ինդիր է:

**ԱԼԻՍ.** — (Քաջաբար դէմը ցցուելով) Ես կը նախընտրեմ այդ պատուաւոր մահը քան թէ մէկ բոպէ իսկ քու այդ աղտոտ դէմքդ տեսնել հոս:

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.** — (Իր կատաղութիւնը հազիւ զըս պած) Կը մեղքանամ քեզ. Դուն պէտք է գիտնաս, որ ուղղակի սպանդանոց կ'առաջնորդուիք բոլորդ ալ, խելօք եղիր ու նստէ. քեզի ըսելիք ունիմ, եւ վստահ եմ, որ դոհ պիտի մնաս անկէ:

**ԱԼԻՍ.** — **ՄԵՂՔԱՆԱԾԼ...** ատիկա մերկութիւն ծաղրել ըսել է, եւ մանաւանդ, որ ես քեզմէ դութ ալ հայցած չեմ: (Դուրսի ճայներուն ակնարկելով) Թէ որ իրական մարդասէր մըն ես, եւ ամբողջ նահանդը քու հրամանիդ ենթակայ է, ապա այդ փողոցի լացն ու կոծը ի՞նչ է, այդ մանուկներուն աղաղակները ականջներդ չեն խլացնե՞ր, անկեղծութիւնդ (՝) յայտնելու համար ինչո՞ւ չես փութար այդ անմեղներու բանակը փրկելու (Խիստ) կորսուի՛ր աս-

կից, եւ զիս իմ ցաւիս հետ ձգէ, շո՛ւտ, շո՛ւտ:

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.** — (Վնոական) Լսէ՛ զիս, ես հոս  
ո՛չ մարդասիրութեան եւ ո՛չ ալ փրկութեան համար  
եկած եմ, այլ մասնաւոր գործի մը համար. պիտի  
հպատակի՞ս ինծի:

**ԱԼԻՄ.** — (Բծախնդիր կերպով) Նոյն իսկ քու  
կեանքիդ սիրոյն, այդ հարցումէդ առաջ հաճիր ինձ  
յայտնել՝ թէ ո՞վ ես որ այդպէս սեւ վարագուրին  
ևու սքողուած կը մնաս:


**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.** — (Շուարած) Ամբողջ նահանգին  
մէջ չկայ մէկը, որ զիս չճանչնայ: (Պարծանքով)  
Ես Մուհամմէտ պէյն եմ:

**ԱԼԻՄ.** — (Շանթահար) Մուհամմէտ... դո՛ւն  
անիրաւ ոճրագործ, դուն չէի՞ր որ հարիւրաւոր իսեղծ  
երիտասարդներ իրենց կեանքին դարնան մէջ կախա-  
ղանի անարդ մահուան եւ մութ խոնաւ բանտերու  
անվերջ տանջանքներուն դատապարտեցիր. այդչա-  
փը բաւական չե՞ր քու մոլեռանդ կիրքիդ գոհացում  
տալու համար, եւ սա գիշերուայ լուռ մեռելութեան  
մէջ՝ հազարաւոր մանուկներ եւ անկարողներ իրենց  
հանգիստէն զրկելով՝ այս արգահատելի վիճակին  
մատնեցիր. տես սա երկայն կարաւանը եւ ամչցիր  
արարքներէդ:

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.** — Դէպքերէն շատ ազդուած ըսե-  
միքդ չես գիտեր, թէ որ քիչ մը հանգստանաս եւ ու-  
շաբերես բնականաբար պիտի զղջաս ապշութեանդ  
վրայ, եթէ արդէն շատ ուշ չըլլայ:

**ԱԼԻՄ.** — Ես գիտեմ ինչ որ կ'ըսեմ, եւ երբէ՛ք  
չպիտի զղջամ, անէ՛ծք, անէ՛ծք... միշտ անէծք ու  
նախատինք քու սեւ անուանդ եւ գարշելի դոյու-  
թեանդ:

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.** — (Սուրը մերկացնելով) Գիտե՞ս  
նոյն իսկ այս գիշեր քանի հայերու դիակները գետին  
փոեցի այս սուրովս. գիտցած ըլլաս, որ այս վայր-



կեանիս քեզի ալ նոյն վիճակին ենթարկելու կարողութիւնը ունիմ, հնազանդի՛ր ինձ, եւ հրամաններս կէտ առ կէտ գործադրէ, եթէ ոչ . . .

**ԱԼԻՍ.**—(Անվեհեր) Քու սուրդ անկարող է ինձ կամքիդ հպատակեցնելու. ի՞նչ կ'ուզես կնիկ մարդէ մը ի՞նչ կրնամ ընել քեզի. եթէ ուզածդ ոսկի եւ գոհարներ են առ, եւ զիս կամքիս ձգէ, (զարդեղեները հանելով վրան կը նետէ) իսկ թէ որ նպատակդ պատոյս հետ խաղալ է, այդ ալ քու կործանումդ կը նշանակէ:

**ՄՈՒՀԱՄՄԵՏԾ.**— Ա՛լ ձգէ այդ անվերջ խելազարութիւնը, եւ շտապէ ասկից հեռանալ, եթէ կ'ուզես կեանքդ փրկել. ես վստահ էի թէ այս անկեղծ առաջարկս եւ պաշտպանութիւնս սիրով պիտի ընդունէիր:

**ԱԼԻՍ.**— Ալ «անկեղծ» ու «պաշտպանութիւն» բառերը մի՛ շահագործեր, երբ դուն իրական հրէշ մը եւ մարդակեր դազան մըն ես:

**ՄՈՒՀԱՄՄԵՏԾ.**— Ալ համբերութիւնս հատաւ, չեպիտի հանդուրժիմ որ վայրկեան մը իսկ կամքիդ վըրաչ հաստատ մնաս (կը յարձակի):

**ԱԼԻՍ.**— (Պաշտպանողական վիճակով) Հեռացի՛ր, հեռացի՛ր. (կը փորձէ պրծիլ):

**ՄՈՒՀԱՄՄԵՏԾ.**— (Անոր հետեւելով) Քու վախճանդէ:

**ԱԼԻՍ.**— Գլխուդ սիրոյն մի՛ հետեւիր ինձ, ատելութեանս զոհը պիտի դառնաս:

**ՄՈՒՀԱՄՄԵՏԾ.**— (Հասնելով Ալիսին, ակռաները կռնտելով գետին կը նետէ զայն) Ալ չե՞ս ուզեր անձնատուր ըլլալ, չե՞ս ուզեր կամքիս հպատակիլ:

**ԱԼԻՍ.**— Մա՛հը միայն կրնայ զիս քու անարդ կամքիդ յանձնել, (արագ վեր տրցելով) ես ինքզինքս բաւականաչափ զօրաւոր կ'զգամ տակաւին՝ դազաններու դէմ կեանքս ու պատիւս պաշտպանելու. սա

Եղունդներովս պիտի փորեմ քու այդ աչքերդ որ մեր  
աւերակները չկրնաս տեսնել։ (Երեսները կը նաևկէ)։

**ՄՈՒՀԱՄՄԵՏԸ.**— (Ուժգին յարակելով) Պիտի  
սպաննեմ քեզ...

**ԱԼԻՄ.**— (Անհաւասար կոռուկ մը վերջ ուժասպառ  
իշնալով) Այո՛, պիտի մեռնիմ՝ բայց դիւցազնա-  
բար։

**ՄՈՒՀԱՄՄԵՏԸ.**— (Կուտ) Հա՛, Հա՛, Խանըմ  
կ'երեւի խաղը կորսնցուցիր վերջապէս։

**ԱԼԻՄ.**— (Ինկած տեղը խոր ժեշտութեամբ  
կուրծքը ուժգին կ'ելեւեցէ ատելութեան արտայայ-  
տութիւնը դէմքին. նոյն միջոցին պատուհանին բա-  
րակ վարագոյրին ետեւէն Պերճին դէմքը կը նկարուի  
անշարժ, ծանր ակնարկը այն կողմ ձգելով սոսկալի  
ցնցումով մը պատկերը տեսնելով գլուխը վար կ'իյ-  
նայ. սրափելով վեր կանգնած դէպի պատուհան կը  
վագէ պոռալով) ՊԵ՛ՐՃ՛... ՊԵ՛ՐՃ՛... (Պերճին  
դէմքը անհետացած էր արդէն) ԵՐԱ՛Ղ, ԵՐԱ՛Ղ...  
Ո՛Հ, ՊԵՐՃ, միշտ պիտի սիրեմ քեզ։ (Կրած ազդե-  
ցութենէն մարած կ'իյնայ)։

**ՄՈՒՀԱՄՄԵՏԸ.**— (Սարսափած զէնքին փարելով  
չորս կողմ կը նայի, մէկ մը չտեսնելով) Հապա, ան-  
շուշտ երազ էր, թշուառական ՊԵՐՃԸ ո՞ւր, դուն  
ո՞ւր. (Բազկերակը բռնելով) մարեր է միայն, այս  
աւ բաղդաւորութիւն մըն էր, աչքերը տանս մէջ թող  
բանայ։ (Շալկելով կը մեկնի։)

### Է. ՏԵՍԱՐԱՆ

ԹՈՐՈՍ, ԹԱԳՈՒՀԻ, ԶԱՐԵՀ, ՊԵՐՃՈՒՀԻ Եւ ՀԱՍԱՆ

Հասան կատաղաբար ներս կը քէ թորոսը, Թա-  
գուհին, Պերճուհին եւ Զարեհը կապուած վիճակով։

**ՀԱՍԱՆ.**— Գիտէ՞ք, Զարեհը առանց Հարց ու

փորձի անմիջապէս պիտի կախուի, երբ այսպէս դատարան յանձնեմ:

**ԹԱԳՈՒՀԻԿԻ.** — Հասան պէյ, խղճա զաւկիս եւ մեղի, մեր մինակ նեցուկն է այս սեւ օրերուն:

**ԹՈՐՈՍ.** — Զէ մի՞, որ ամբողջ մեր կեանքի ընթացքին դրացի եղած եւ սիրով ապրած ենք առանց իրարու վնասելու, յիշէ այդ օրերը... Զարեհս անմեղ է:

**ՀԱՍԱՆ.** — Այդ օրերը անցեր են եւ կարելի չէ ասոնք նկատի ունենալ: Պէտք է Զարեհը արդարութեան յանձնուի: (Պահ մը լոռոքիւնէ վերջ) Մինակ կերպով մը կրնաք զինքը կախաղանէն ազատել:

Թորոս Հասանին հետ անկիւն մը բառուած սակառկութեան կը սկսի, Հասան դժգոհ կերպով ռարունակ գլուխը կը քոքուէ: Այս միջոցին Զարեհը մօրը քեւերուն մէջն է եւ Պերճուհին Զարեհին փարքուած:

**ԶԱՐԵՀ.** — (Մօրը) Ես կը նախընտրեմ կախաղան բարձրանալ, քան թէ թուրքին աղաչել կեանքի մը համար:

**ԹԱԳՈՒՀԻԿԻ.** — (Ցած ձայնով) Լոէ, որդիս, քանի մը դահեկանով կեանքդ կրնանք աղաչել:

**ԹՈՐՈՍ.** — (Քսակը Հասանին ափին դնելով) Այս է բոլոր ունեցածս:

**ՀԱՍԱՆ.** — Ինչ որ է, այս բաւականաչափ փըրկադին մէ չէ, բայց ըսածիդ պէս դրացիութեան խնդիր մը կայ. գացէք, աղօթեցէք թագաւորին լոյսին: (Կ'արձակէ Զարեհը) Եւ աճապարեցէք ժամանակին որոշեալ տեղը զտնուելու, որովհետեւ ասկէ վերջ քաղաքին մէջ տեսնուող ոեւէ հայ անրացառաբար պիտի զնդակահարուի: (Թուրս):

**ԶԱՐԵՀ.** — Բոնի վտարուիլ հայրենիքէն... արդարութիւն, արդարութիւն, ինչո՞ւ չես շանթահարեր այս ճիւաղները:

ԹՈՐՈՍ. — Քալեցէք, մեր հաւատքին մէջ հաստատ մնանք, հայ ենք եւ հպատակինք մեր ճակատագրին։ (Թեւ քեւի բռնած կը ֆալեն դէպի դուռ։)

### Է. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆՔ ԵՒ ԶԵՔԻ

ԶԵՔԻ. — (Հեւ ի հեւ ծրար մը ուսին վազելով անոնց ետեւէն) Մուհամմէտ պէտին մարդիք եկան եւ դրաւեցին ամէն ինչ, ու ես հազիւ կրցայ այս ծրարս աղատել եւ եկայ որ ձեզի հետ մեկնիմ։

ԹՈՐՈՍ. — Զէ՛, տղաս չէ՛, դուն թուրք ծնած ես եւ չեմ ուզեր որ մեզի հետ չարչարուիս։

ԶԵՔԻ. — Կ'ուզեմ ձեզի հետ չարչարուիլ քան թէ առանձին մնալ։

ԶԱՐԵՀ. — Զէքի, դուն պէտք չէ որ մեզի հետ երթաս։

ԶԵՔԻ. — Ո՛չ, առանց ձեզի կեանքը ոչինչ է։

ԶԱՐԵՀ. — Եւ յիշէ, որ Ալիսն ալ Մուհամմէտին կողմէ բռնաբարուած է։

ԶԵՔԻ. — Ալիսը բռնաբարուած է . . . Ո՛չ, չեմ ուզեր ձեզ այս վիճակով տեսնել։ (Հակառակ կողմ կը դառնայ)։

Միւսներ կը մեկնին եւ քախծոտ ճայներ կը տարունակուին։

Վարագոյրը կ'իջնէ։

### ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾԻՆ





## ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Ա. ՏԵՍԱՐԱՆ

ՊԵՐՃ, ԳԵՂԱՄ Եւ ՎԱՀԵ

ԵՍԱՐԱՆԸ կը ներկայացնէ զինուորական աղտոտ  
վրան մը: Աստ անդան ցրուած կան բահ ու բրիչ:  
Դուրսէն մերք ընդ մերք անախորժ ժխորներ եւ  
ճիերու խխնչիւններ կը լսուին:

Ժամանակը լուսնալու մօտ է եւ արթնցած կը հագուին:

**ՊԵՐՃ.— (Յօրանիջելով) Ո՛ւՓ, ո՛ւՓ, Հին օրեր:**  
**(Կ'երգէ)**

Երկայն դիշեր, տըխուր դիշեր,  
Ցաւըս շատ է դիս մի տանջեր.  
Երկայն դիշեր, ցաւոտ դիշեր.  
Զիս կը տապկեն իմ հին չուշեր:

Զկայ ծընողք, չկայ քոյլ ու եղբայր,  
Զկայ տուն, չկայ հանգիստ ոչ ալ եար.  
Հայրենիքս ալսակէս հեռու  
Ինչո՞ւ ծառայել վատերու:

(Ինֆնիրեն տխուր) **Այս ի՞նչ մղձաւանջային**  
**դիշեր մը եւ ի՞նչ տարօրինակ երազ մըն էր, որ ող-**  
**բերդութիւնով վերջացաւ:** (Պայուսակէն պատկեր մը  
հանելով յափւտակուած պահ մը նայելէ վերջ) **Ո՛հ,**  
**պաշտելիս, կը գուշակեմ թէ աննախնթաց նեղու-**  
**թեան մը մէջն ես. տանջանքներդ հոգիս կը չար-**  
**չըրկեն ու կը մաշեն. վայրկեան մը իսկ չպիտի մոռ-**  
**նամ քեզ, վասնզի վստահ եմ որ նոյնն ալ դուն**

Կ'ընես։ Այո՛, մարմինս հիւծած է, սիրտս ալ խոցոտուած՝ բայց, քանի երակներուս մէջ արիւնը շրջան կ'ընէ՝ չպիտի դադրիմ սիրելէ։ Հոգ չէ թէ լեռներ ու ձորեր, սարեր ու անտառներ, գետեր ու ծովեր կան մեր միջեւ՝ դարձեալ սիրտս կարօտադին թեւեր կապած պիտի թոչի դէսլի քեզ անդադար։ Սէրը անմեղ է եւ նուիրական, բոնակալները կրնան դայն կաշկանդել՝ բայց, չեն կրնար մարելու արգիւլել։

**ԳԵՂԱՄ.** — (Նշմարելով անոր յուզմունիքը) Պերճ, ի՞նչ է այդ վիճակդ դարձեալ, քանի երթաս կը նիշարնաս։ առողջութեանդ հանդէսլ ինչո՞ւ այդքան անտարբեր կը դտնուիս, ինչո՞ւ չես փորձեր քիչ մը հանգստանալ։

**ՊԵՐՃ.** — Միթէ կարելի՞ է հանգստանալ, երբ սիրտս կրակ ինկած ամրողջ էութեանս կ'սպառնայ։

**ԳԵՂԱՄ.** — Ի՞նչ է, ընկեր, ի՞նչ է ցաւդ, որ այսչափ երկար սլահած ես մեղմէ։ ինչո՞ւ չես յայտնել մեղի։

**ՊԵՐՃ.** — Այս գիշեր դարձեալ տարօրինակ երազ ըը տեսայ։

**ՎԱՀԵ.** — (Որ իր կարկտաններով զբաղած էր) Հա՛, հա՛, նորէն երա՞զ։ Պերճ, պառաւներու պէս միշտ երազ կը տեսնես եւ անոնց մեծ կարեւորութիւն կուտաս։

**ՊԵՐՃ.** — Վահէ, ինդրեմ դիս մի՛ մեղադրեր, այս գիշերուայ երազս անսովոր էր եւ խորհուրդաւոր, կ'ուզեմ պատմել ձեղի։

**ՎԱՀԵ.** — (Համակրաննով) Այո՛, Պերճ, պատմէ որ ժամանակը անցնի։

**ՊԵՐՃ.** — Բոլոր պարագաներուս մասին պատմած եմ ձեղի, բայց Ալիսին մասին տակաւին բան մը չէք գիտեր։

**ՎԱՀԵ.** — Ո՞վ է Ալիսը։

**ՊԵՐՃ.** — Այն, որուն սէրս խոստացած եւ սիրտս նուիրած եմ:

**ՎԱՀԿԻ.** — (Պերճին ուսին զարնելով) ԿԵցցե՛ս ՊԵՐՃ, ասիկաչ բոլորովին նորութիւն մըն է մեղի համար:

**ԳԵՂԱՄ.** — ՊԵՐՃ, մի՛ խենթանար այդպէս վերացական խնդիրներու համար:

**ՎԱՀԿԻ.** — Գեղամ, մի՛ վիրաւորեր տղան, լսէ զինքը, խորհէ, որ ատեն մը դուն եւ ես ալ այսպէս երիտասարդ ու սիրոյ խենթեր էինք:


**ԳԵՂԱՄ.** — Այդ խնդիրներով ձեր ժամանակը երբէք մի՛ վատնէք. զինուոր մարդու մը պարագաները կարելի չէ որ փորձութեան ենթարկուին, քանզի կառավարութիւնը յանձնառու է անոնց ապահովութեան:

**ՎԱՀԿԻ.** — Գեղամ, խնդրեմ այդչափ կոյր մի՛ ձեւանար, չես տեսնե՞ր, այս վերջերս թուրքերուն բերանը որչա՛փ կը հոտի մեղի հանդէպ: ՊԵՐՃ, օդէն շատ մի ազդուիր, ան իր ուղած ուղղութեամբ կրնայ փչել:

**ԳԵՂԱՄ.** — Շարունակեցէք ուրեմն (Դրան մէջ կանգնած դուրս կը դիտէ):

**ՎԱՀԿԻ.** — ՊԵՐՃ, շարունակէ, չմոռնանք մեր սիւթը:

**ՊԵՐՃ.** — Երազիս մէջ մեր տունն էի. Ալիսն ու ես լաւ կերպով զինուած մեր լեռներէն ծաղիկներ քաղելով եղնիկներ եւ ուրիշ որսի կենդանիներ կը հալածէինք: Վերջապէս յաջողեցանք եղնիկ մը ձգել մեր առջեւ ու անտառներուն մէջ հետապնդել զայն. մեր որսը, սակայն, խիստ ճարպիկօրէն լեռնէ լեռ, սարէ սար կ'զբաղեցներ մեզ, եւ կարծես մէկու մը կ'ապառւիներ, որ պիտի ազատեր զինքը մեր անդադար տեղացող գնդակներէն: Այս ընթացքով մեր առջեւ դտանք դահավէժ անցք մը, ուր վերը մինակ եր-



Նկար 1. ԵԱԳՈՒՊԵԱՆԻ  
«ՍԱՐՍԱՓՆԵՐ»

Երկինքի պայծառ աստղեր, ի՞նչպէս կրնաք դիտել  
այս սրտահմլիկ տեսարանը... (Էջ 15)



կինք կը տեսնուեր՝ իսկ վարը անդունդ մը, ուրկէ մեր որսը մէկ ոստումով անցաւ եւ դիմացի լեռնադաշտէն ջուր խմելով սկսաւ անհոգ կերպով արածիլ, եւ մենք ալ փորձեցինք այս վտանգաւոր տեղէն անցնիլ ու շարունակել մեր զրօսանքը։ Հազիւ մէջտեղն էինք հասեր, երբ մեր որսին փոխարէն դիմացնիս գըտանք ահազին վիշապ մը, որ անդթօրէն իր պոչով սկսաւ մեզ հարուածել անխնայ։ Այս սոսկալի վայրին մէջ ոտքի տեղ չունէինք որ կարենայինք մենք զմեզ պաշտպանել, ու ճարահատ իրարու փաթթուած վիշապին անդադադար հարուածներուն տակ սկսանք գահավէժ գլուրուիլ անդունդն ի վար։ Այս եղեռնական վիճակին մէջ վիշապը գրկէս յափշտակեց Ալիսը, որուն օգնութեան աղաղակներուն մէջ արթըննալով ինքզինքս գտայ այս պաղ իրականութեան առջեւ։ Վահէ՛, այս երազս խիստ չարագուշակ է։

**ՎԱՀԷ. —** (Քիչ մը մտածելով) Ո՛չ այնքան, բայց վիշապը թշնամի է, Պերճ։

**ԳԵՂԱՄ. —** Տղաք, երկու մարդ դուրսը կանդնած մեր մասին կը խօսակցին, լոեցէք տեսնենք ի՞նչ է իրենց պահանջը մեզմէ։

Ուսադրութեամբ կ'ունկնդրեն։

## Բ. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆԻ ԵՒ ԶԱՅՆԵՐ

**Ա. ԶԱՅՆ. —** (Դուրսէն) Ահաւասիկ, Սապրի Պէյ, այս է իրենց վրանը։

**Բ. ԶԱՅՆ. —** Շատ աղէկ, Ալի չավուշ, չմոռնանք մեր այս առաւօտուայ ծրագիրը, որ զրօսնելու պատուական միջոց մըն է։

**ԳԵՂԱՄ. —** Հարիւրապետ Սապրի պէյն ու Ալի չավուշն են, սովորականին պէս կը շրջին։

**ՎԱՀԵ.** — (Զարմացած) Ի՞նչ է արդեօք այս անգամ ծրագիրնին:

**ՊԵՐՃ.** — Խաղը մեր գլխուն է դարձեալ, տղաքերանի թէ նպատակնին կանխաւ իմանալինք:

**Ա. ԶԱՅՆ.** — Բայց, Սապրի սէյ, այդչափը կարելի չէ խաղ կոչել, ատոնք առօրեայ կատակներ են, որոնք անդադար տեղի կ'ունենան. ուրիշ նորութեան մը նայինք այս անգամ:

**Բ. ԶԱՅՆ.** — Ի՞նչ նորութիւն կ'ուզես, զանազան պատրուակներով հետերնին կ'իյնանք ու կապիկներու պէս կը խաղցնենք զանոնք. գործի ուշ սկսաք, լաւ չէք գործեր եւ այլն, ըսելով ու օր մըն ալ կ'սպաննենք:

**Ա. ԶԱՅՆ.** — Ես ասոնք մէջտեղէն վերցնելու համար քանի մը օրէ ի վեր ուրիշ կերպի մը վրայ կը խորհիմ:

**Բ. ԶԱՅՆ.** — Ի՞նչ կերպ, ըսէ լսենք:

**Ա. ԶԱՅՆ.** — Ահա', ներսը նստած կը խօսակցին առառ կանուխ: Իրենց այս խօսակցութիւնը պատրուակ ընելով պէտք է ամբաստանենք զիրենք պատերազմական ատեանին առջեւ հետեւեալ կերպով. — Թէ անոնք բռնեցինք գաղտնի խօսակցութեան մը մէջ, թէ իրենք ուրախ էին մեր արեւելեան նահանգներուն գրաւումովը, Տարտանէլի ու Պաղեստինի յարձակումներովը եւ Միջագետքի լքումովը, եւ այլն. եւ տես թէ անմիջապէս իրենց մեղքը ի՞նչպէս կախաղանին վրայ պիտի քաւեն:

**ՊԵՐՃ.** — Տեսէք, ասոնց կանխաւ պատրաստած ծրագիրները իրենց պէս զինուորներուն հանդէպ: Այս առաւօտ մենք պէտք է զիրենք կապիկներու պէս խաղցնենք, որ անգամ մըն ալ մեզի հետ չիյնան:

**ՎԱՀԵ.** — Պերճ, կրնա՞ս սա վարնոցներուն ցոյց տալ՝ թէ Հայուն հետ իյնողը խաղը կը կորսնցնէ միշտ:

Բ. ԶԱՅՆ. — Ուշ կամ կանուխ ատոնք պիտի ուտենք, բայց ատիկա լաւագոյն կերպն է, անզամ մը փորձենք, վոտահ եմ պիտի յաջողինք մեր նպատակին մէջ:

ՊԵՐՃ. — Ընկերնե՛ր, կ'ուղեմ այդ յիմարները լրտեսել ու ծրագիրնին լաւ մը հասկնալ, դուք պահ մը սպասեցէք զիս: (Զգոյշ կերպով դուքս կը սահի):

ՎԱՀԵ. — (Հետաքրքրաբար կը նայի ետեւէն):

ԳԵՂԱՄ. — Անօդուառ ժամանակի վատնում:

\* \* \*

ՊԵՐՃ. — (Նոյն զգուշութեամբ ներս մտնելով) Ծրագիրնին շատ որոշ է, մինչեւ իրենց վրանը միեւնոյն խնդրին վրայ կը խօսակցէին, կ'երեւի այս մեր երեքին ներկայութիւնը բանակին մէջ շատ կը թուի իրենց:

ՎԱՀԵ. — Ուրի՞չ:

ՊԵՐՃ. — Այսչափ, քայլ առ քայլ հետեւեցայ իրենց մինչեւ որ ներս մտան ու նոր եկող լրագիրներուն կապերը քակելով սկսան կարդալ, ձայներնին չէի կրնար լսել եւ վերադարձայ:

ԳԵՂԱՄ. — Տղաք, ալ ձգեցէք սա փուճ խօսակցութիւնը, արդէն լուսնալու վրայ է ժամանակէն առաջ մեր գործին վրայ ըլլանք:

ՎԱՀԵ. — Բայց, Գեղամ, մոռցա՞ր՝ ի՞նչ սատանայական խորհուրդներ կը յղանային մեր պետերը մեղի հանդէսլ:

ԳԵՂԱՄ. — Ճիշդ ատոր համար է որ աճապարել կ'ուղեմ: Իրրեւ պարտաճանաչ զինուորներ մեր ճըշդապահութեամբն ու շրջահայեցութեամբը պէտք է հակազդենք անոնց սխալներուն, որ պատեհութիւն չունենան մեզ հանդէսլ սխալ ծրագիրներ մշակելու:

ՎԱՀԵ. — Ուրեմն, կրնա՞ս պարագայ մը ցոյց տալ ինձ, ուր թերացած ենք մեր պարտականութեանց մէջ՝ ատոնց վատութեան փոխարէն:

**ԳԵՂԱՄ.** — Զէ, չեմ յիշեր այդ տեսակ պարագայ մը, գիտեմ որ ամէն օր ճշղապահութեամբ մեր պարտականութիւնները կատարած ենք, եւ արդէն այդպէս պէտք է ընէ զինուոր մը:

**ՊԵՐՃ.** — Գեղամ, սիրելի ընկերս, դուն պէտք է սա պարագան ըմբռնես՝ թէ մեր մեծերը մեզ իրուն զինուոր չեն ճանչնար, եւ մեր ոտքերը սահեցնելու համար ամէն գետնաքարչ ստորնութեանց կը դիմեն, հետեւաբար մեր հաւատարմութիւնը հիմնովին սըխալ է:

**ԳԵՂԱՄ.** — Պերճ, ես քեզ շատ փոխուած կը տեսնեմ. դուն իրերը տարրեր ակնոցով դիտելով ուղածիդ պէս բացատրել կը ջանաս, որ շիտակ չէ, թէ որ իրենք մեզ անտեղի կերպով ամբաստանեն, մենք ալ իրենց չափ լեզու ունինք, իրողութիւնը պարզելով ամբաստանութիւննին կը չեղոքացնենք ու ամէն բան կը լմննայ: (Պայուսակը ուսին կախելով) Ի՞նչ անտարբեր կերպով թմբած էք. ելէ՛ք, երթանք: (Դէպի դուռ ֆանի մը ֆայլ կ'առնէ):

**ՎԱՀԵ.** — (Նմանապէս պայուսակը ուսին) Շա՛տ աղէկ, երթանք, բայց պաշտպանութեան միջոց մըն ալ խորհելու ենք՝ որովհետեւ անոնց սուտին կը հաւատան ու մեր ճշմարտութեան երբէ՛ք: (Գեղամին կը հետեւի):

**ՊԵՐՃ.** — Ընկերներ, բոպէ մը սպասեցէք որ մեր մինակ փրկութեան միջոցը յայտնեմ ձեզի:

**ՎԱՀԵ.** — Ի՞նչ է Պերճ, անցեալ օրը Ահմէտը ծեծածիդ պէս՝ կրնա՞ս, սա Ալի չալուշին հասակին ալ քանի մը հատ չափել:

**ՊԵՐՃ.** — Զէ՛, Վահէ, այս անդամ տարբեր չափ առի ձեռքս:

**ՎԱՀԵ.** — Ի՞նչ տեսակ չափ է այս անդամ:

**ՊԵՐՃ.** — Կրնա՞ս կտրիճ մարդու մը տասը քաջութիւնները համբել:

**ԳԵՂԱՄ.** — (Սրտնեղած) Շատ ուշ ենք, տղա՛ք:

**ՎԱՀԵ.** — Զէ, չեմ կրնար, Պերճ, ի՞նչ են անոնք:

**ՊԵՐՃ.** — Վահէ, սա ճշմարիտ խօսք մըն է, որ կտրիճ մարդու մը տասը քաջութեան մէկը զարնել, գետին ձգել, իսկ ինն ալ փախչիլ է: Այս անգամ զարնելով չենք կրնար մենք զմեղ ազատել՝ պէտք է չարութենէն խոյս տալ:

**ՎԱՀԵ.** — (Դէպի մօտ գալով) Պերճ, ականջիս լաւ հնչեց այդ, ի՞նչ ըսել կ'ուզես:

**ՊԵՐՃ.** — Բսել կ'ուզեմ որ ճիշդ այս վայրկեանիս ձգենք բանակը, եթէ չենք ուզեր գերեզմաննիս մեր ձեռքով փորել:

**ՎԱՀԵ.** — (Պայուսակը վար նետելով) Ես քու հետդ եմ, Պերճ, որչա՛փ որ ծառայենք՝ նախատինք է մեր բաժինը:

**ԳԵՂԱՄ.** — Ի՞նչ տկար դատողութեան տէր մարդեր էք:

**ՊԵՐՃ.** — Ընկերս, այս է իմ վերջնական որոշումս:

**ՎԱՀԵ.** — Որ հրամայական է:

**ԳԵՂԱՄ.** — Որ յիմարական է:

**ՊԵՐՃ.** — Որ կենսական է:

**ԳԵՂԱՄ.** — Որ դասալքութիւն է:

**ՊԵՐՃ.** — Որ առաքինութիւն է:

**ԳԵՂԱՄ.** — Որ այլանդակութիւն է:

**ՎԱՀԵ.** — Ինչ որ կ'ուզէ ան ըլայ՝ ես կ'ուզեմ Պերճին հետ մնալ: Շատեր կը բացակային իրենց դործերէն, օր մըն ալ մենք հետեւինք այն ծոյլերուն օրինակին՝ իրրեւ հիւանդներ:

**ԳԵՂԱՄ.** — Վահէ՛, կը տեսնեմ որ Պերճը խարիսխ ձգող նաւու մը սլէս անշարժ է. գոնէ երկուքս երթանք, եւ իրիկունը կը խորհրդակցինք մեր ընելիքին վրայ: Կը յուսամ Պերճն ալ վճռապէս չէ որոշեր անմիջապէս անյայտանալ:

**ՎԱՀԵ.** — Ի՞նչ պիտես՝ թէ ես Պերճին պէս չեմ խորհիր:

**ՊԵՐՃ.** — Ասկէ վերջ չեմ փափաքիր ուեւէ անպիտանի հրամանին ենթարկուիլ: Ուեւէ դէպք չկըրնար որոշումս բեկանել, ես որոշած եմ անմի՛ջապէս բանակը ձգել:

**ՎԱՀԵ.** — Եւ, մնաց որ արդէն դուրս ելածնուս պէս՝ լարուած թակարդին մէջ պիտի բռնուինք չազատուելու սլայմանով: Գեղամ, գործերնիս թուրքերու հետն է, աչքերդ լայն բաց:

**ԳԵՂԱՄ.** — Բարեկամներս, ատիկա զինուորական կարգապահութիւն չէ, եւ ես ձեր համոզումը գոյացուցած չեմ. ես կ'ուզեմ պարտականութեանս վրայ գտնուիլ. իրիկունը կը տեսնուինք: Մնա՛ք բարով: (Դէպի դուռ կը ֆալէ):

**ՊԵՐՃ.** — (Դուռին մէջ Գեղամին ձեռքը սեղմելով) Ընկե՛ր, կատակ չէ ըրածս եւ չեմ կրնար քեզ ստիպել որ ինձի հետեւիս. երկայն ժամանակ իրարու հետ սիրով ապրած ենք: Մնաս բարով, ես պիտի երթամ:



### Գ. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆՔ ԵՒ ԶԱՅՆԵՐ ԿՐԿԻՆ

**Բ. ԶԱՅՆ.** — (Դուրսէն Պերճին խօսքը ընդմիջելով) Հա՛, Հա՛, Ալի չավուշ, կը ծրագրէիր զիրենք պատերազմական ատեանին վճռով սպաննել. տես սա թարմ լուրը, ինձմէ հրաման, գնա՛ սպաննէ զիրենք. ես եմ պատասխանատուն:

**Ա. ԶԱՅՆ.** — Բերանդ պաղնեմ, Սապրի պէյ, ի՞նչ է, բարձր կարդա՛ որ լսեմ:

**ՊԵՐՃ.** — (Տակաւին Գեղամին հետ ձեռք ձեռքի դրան մէջէն) Տեսնենք ի՞նչ է եղեր:

**Բ. ԶԱՅՆ.** — Ահաւասիկ բառ առ բառ. — Կառա-

վարութիւնը հրաման արձակեց ամէն կողմ, թուրքիոյ հայութիւնը՝ անխնայ ջարդով ու տեղահանութեամբ արմատախիլ ընելու համար: Եւ արդէն կանխաւ պատրաստուած յատակագիծով մը գործի սկսուած ու ստացուած լուրերը խիստ զոհացուցիչ են: Բանակին մէջ իրեւ զինուոր ծառայող հայերը չեն կրնար այս որոշումէն բացառութիւն կազմել, քանի հայ արիւն կը կրեն իրենց երակներուն մէջ: Հայը միշտ հայ է, եւ մեր ազգային շահը կը պահանջէ անոնց գլուխը ջախջախել՝ քանի պատեհութիւնը մերն է:

**Ա. ԶԱՅՆ.**— Հա՛, հա՛, ստուգելէ վերջ աղուոր խաղ մը խաղանք իրենց գլխուն, բայց դժբաղդաբար ներկայիս մինակ երեք հատ ունինք մեր ձեռքին մէջ:

\* \* \*

**ԳԵՂԱՄ.**— (Դեպի ներս կը վազէ ու պայուսակը վար նետելով) Արդարեւ, ասիկա խիստ լուրջ խնդիր մըն է, կ'արժէ ուշադրութեամբ նկատողութեան առնել՝ եթէ շատ ուշ չէ արդէն: Արդեօք պզտիկներս ո՞ւր պիտի մնան:

**ՊԵՐՃ.**— Այս բոլորը կանխաւ գուշակեր էի, բայց այսքան ծայրայեղութիւն չէի կրնար երեւակայել: Զենք կրնար բարութիւն ակնկալել այն ձեռքէն, որ վճռած է մեզ ազգովին փճացնել:

**ԳԵՂԱՄ.**— Ուրեմն, ի՞նչ ընելու ենք:

**ՎԱՀԵ.**— Ես Պերճին հետն եմ մինչեւ մահ:

**ԳԵՂԱՄ.**— (Խորհելով) Այո՛, Պերճ, իրաւունքը քուկդ է. սխալներս տեսայ: Մերը դասալքութիւն չէ՝ այլ առաքինութիւն, պէտք է անմիջապէս բանակը ձգել եւ օր առաջ մեր ընտանիքներուն միանալ՝ միասին տանջուելու եւ միասին մեռնելու համար: Թէ որ մեր պզտիկները մեր օճախներուն մէջ

Հանգստութիւն չպիտի վայելեն ու ամէն իրաւունք-ներէ զրկուելով թափառական, անօթի եւ ծարաւ անորոշ վայրերու մէջ պիտի կորսուին՝ մեր ծառայութիւնը իրապէս յիմարական է: (Վնական) Զեր որոշումին համամիտ եմ:

**ՎԱՀԵ.** — Աճապարենք ուրեմն, մեր օձիքները ձեռք չտուած:

**ՊԵՐԾ.** — Բարեկամներս, խորհեցէք՝ թէ աւելիքան ամսուայ մը խիստ արկածալից ճամբորդութիւն մը ունինք: Այս ընթացքին մահ եւ ամէն ինչ կրնայ պատահիլ, կամովին չեմ ուզեր ձեզի պատճառ ըլլալ՝ բայց ուրախ պիտի ըլլամ՝ եթէ ձեր անկեղծ ընկերակցութենէն չզրկուիմ այս ճամբորդութեանս ընթացքին:

**ԳԵՂԱՄ.** — Զ'է, չէ՛, ես համոզուեր եմ որ այդէ մեր մինակ ելքը: Պէտք է այսօր ճամբայ ելլենք:

**ՎԱՀԵ.** — Պէտք է որոշումիս անմիջապէս գործադրենք իրրեւ դաւաճաններ չարգելափակուած: Այս վայրկեանին ազատ ենք եւ պատեհութիւն ունինք, դուցէ յաջորդ վայրկեանը ուշ եղած ըլլայ:

**ԳԵՂԱՄ.** — Բայց, ասկից ի՞նչպէս մեկնելու ենք որ կասկածի տեղի չտանք:

**ՊԵՐԾ.** — Այդ հոգը ինձ ձգեցէք, կասկածու մի ըլլաք: (Գետնին բահ ու բրիչները վերցուցած ընկերներուն տալով) Առէ՛ք ձեր գործիքները եւ սովորականին պէս անդամ մը ասկից դուրս ելլենք: (Իր եւ ընկերներուն պայուսակները քովերնին կախելով եւ անոնց հագուստները տոկելով) Հետեւեցէ՛ք ինծի, եւ հանդիպող սպաները բարեւել մի՛ մոռնաք:

Զինուորական մարտով մը կը մեկնին:



## Դ. ՏԵՍԱՐԱՆ

ՕՄԱՐ, ՄՈՒԽԹԱՐ Եւ ՄԱՀՄՈՒՏ

Տեսարանն է Մուխթար պէյի քնակարանը :

**ՕՄԱՐ.** — (Զեռքը զէնիք ու սուրեր ներս կը մտնէ ու զանոնիք պատերէն կախելով) Այս ալ այսպէս-բացառիկ դար մը եղաւ, օրն ու արեւը հաւատաց-եալներուն շնորհուելով։ Մեր դրացի հացի կարօտ քէօր Պէքիրը՝ այսօր հսկայ հարստութիւններու տի-րացած է քովն ի վար սուր մը կախած եւ ուսին նշան մը դրած ըլլալուն համար։ Կուգան կոր (աքոռները կը տոկէ) տեսնեմ այսօր իրենց հետ որչա՞փ հարըս-տութիւն կը բերեն։ (Դրան առջեւ երթալով արձա-նի պէս ժիփչիտակ կը կայնի)։

Մուխթար եւ Մահմուտ ձեռքերնին զանազան գո-հարեղէններ ներս մտնելով զանոնիք սեղանին վրայ կը ժարեն։

**ՕՄԱՐ.** — (Խոնարհութիւն կ'ընէ եւ գոհարեղէն-ներուն ժիլ ժիլ նայելով դուրս կ'ելլէ)։

**ՄՈՒԽԹԱՐ.** — Ի՞նչ որ է, այսօր ալ որսերնիս դէշ չէ։

**ՄԱՀՄՈՒՏ.** — Թէեւ օրէ օր կը նուազի՝ բայց հոգ չէ, քանի որ կեավուրներն ալ կը նուազին։

**ՄՈՒԽԹԱՐ.** — Հազար ապրի թագաւորը, որ այս պատեհութիւնը մեզի շնորհեց։

**ՄԱՀՄՈՒՏ.** — Ի՞նչ սքանչելի հաճոյք մըն է բոնի կողոպտել ու անպատիժ մնալ։

**ՄՈՒԽԹԱՐ.** — Անպիտաններուն ձեռքէն կարելի չէր նոյն իսկ լումայ մը առնել, չեմ դիտեր ի՞նչպէս կուտան հիմա այս մանեակները, որոնք հազարներ կ'արժեն։

**ՄԱՀՄՈՒՏ.** — Եթէ իրենց կամքին մնար բնա-

կանաբար չպիտի տային, բայց գիտեն, որ այս սուրերը մեր քովնիվար ցոյցի համար կախած չենք:

**ՄՈՒԽԹԱՐ.**— (Սուրբ Շոյելով) *Օրհնեալ առարկայ,* *Մարդարէին մինակ աւանդը:* (Պահ մը լուս ու մտածկոտ):

**ՄԱՀՄՈՒՏ.**— *Մուխթար պէյ,* *ի՞նչ կը մտածես դարձեալ:*

**ՄՈՒԽԹԱՐ.**— *Հա՛,* *Հա՛,* *սա կը մտածեմ,* *որ այս կեավուրները այսչափ անտանելի չարչարանքներէ վերջ,* *տակաւին ամուր կը մնան իրենց հաւատքին վրայ:* *Ճշմարիտը՝ քար-հողի արարած մը չպիտի կրնար տանիլ այս փորձութեանց մէկ փոքրիկ մասը:*

**ՄԱՀՄՈՒՏ.**— *Ատոր վրայ ալ մտածե՞նք,* *իրենց գիտցածը իրենց եւ մերինը մեզի:*

**ՄՈՒԽԹԱՐ.**— *Կեցցե՛ս,* *Մահմուտ պէյ,* *ճիշդ իմ պատասխանս էր,* *որ ինծի տուիր:* *Կարծեմ խմելու ժամանակն է:* (Գոհարեղէնները ետեւի սեղանին վըրայ փոխադրելով) *Օմա՛ր,* *Օմա՛ր:*

**ՕՄԱՐ.**— (Արագ ներս վազելով) *Հրամմեցէ՛ք,* *տէր իմ:*

**ՄՈՒԽԹԱՐ.**— *Կեցցե՛ս,* *Օմար,* *միշտ պատրաստ ես.* *Ի՞նչ ունիս խմելիք,* *հաւատարիմ ծառայ:*

**ՕՄԱՐ.**— *Ամէն ինչ տէր իմ,* *մասնաւորաբար առատ օղի:*

**ՄՈՒԽԹԱՐ.**— *Այդ էր մեր ուղածն ալ արդէն.* *շու՛տ,* *հազարնոցները շարէ սեղանին վրայ:*

**ՕՄԱՐ.**— (Խոնարհութիւն ընելով) *Շատ աղէկ:* (Դուրս կ'ելլէ:)

**ՄԱՀՄՈՒՏ.**— *Կեանքը վայելելու ժամանակն է,* *պէյ:*

**ՕՄԱՐ.**— (Մեծ շիշ մը ձեռքին ներս մտնելով գաւաթները կը լեցնէ ու կ'անցնի):

**ՄՈՒԽԹԱՐ.** — (Գաւաքը ճեռվին) Թաղաւորին կենացը:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Թալէտթ, էնվէր եւ ծէմալ փաշաներուն արեւին:

Գաւաքները զիրար բաղխելով կը խմեն:

**ՕՄԱՐ.** — (Ուժգին վազելով) Անուշնե՛ր: (Գաւաքները կրկին լեցնելով դուրս կ'ելլէ:)

**ՄՈՒԽԹԱՐ.** — Որչա՛փ ուրախ եմ Օմարին պէս ծառայ մը ունենալուս համար:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Քեզի պէս պէյի մը կ'արժէ այսպէս հաւատարիմ ծառայ մը ունենալ: (Պատեհութիւնէն օգտուելով գոհարեղէններուն մէկ մասը կը գրպանէ):

**ՄՈՒԽԹԱՐ.** — Օմար, նոր շիշ մը եւս բեր, ասիւ կա հասֆելու վրայ է:

**ՕՄԱՐ.** — (Դուրսէն) Շատ աղէկ պէյ. (Շիշը առած ներս կը մտնէ եւ գաւաքները լեցնելով դէպի ետ կը սահի. նկատելով որ զինքը տեսնող չկայ, մաս մը գոհարեղէններ վերցնելով դուրս կ'ելլէ):

**ՄՈՒԽԹԱՐ.** — (Գոհարեղէնները մատնանշելով) Ի՞նչ հսկայ հարստութիւն: (Գոհարեղէններուն նայած ցնցուելով) Թափիեցի՞նք արդեօք: (Սեղանին տակը կը նայի):

**ՄԱՀՄՈՒՏ.** — (Սմբած) Այս է բոլորը: Ես պակաս չեմ տեսներ:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Ինչ որ է, բաժնուինք եւ մեր բաժիններուն տէր ըլլանք:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Մուխթար պէյ, մինակ յիշեցնել կ'ուզեմ, որ երէկուայ բաժինս քիչ մը նիշարկեկ էր:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Աւելորդ խօսքեր մի ըներ, Մահմուտ պէյ, եթէ հաւասար զետնի վրայ ընկերներ ենք ատիկա մեզի անվայել է, եւ ես միշտ զգուշացած եմ բաժինիս հարամ խառնելէ: (Երկուքի բաժնելով)

Վատահութիւնը կատարեալ ընելու համար պէտք է վիճակ ձգենք:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Առ է շիտակ կերպը:

**ՕՄԱՐ.** — (Ներս մտնելով) Ներողութիւն, Մուխթար պէյ, երեք զինուորներ գալով ինձմէ հացինդրեցին. քու հրամանովդ կրնա՞մ անոնց քիչ մը ուտելիք տալ:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Անշուշտ կրնաս, բայց ներս կանչէ տեսնեմ ինչ նորութիւններ ունին:

**ՕՄԱՐ.** — Ատիկա լաւ գաղափար է: (Դուրս կ'ելլէ):

**ՄՈՒԽԹԱՐ.** — Անպատեհութեանց տեղի չտալու համար ասոնք վերցնենք, վերջը կը բաժնուինք. (Գոհարեղիները վերցնելով լաթով մը կը ծածկէ):

**ՄԱՀՄՈՒՏ.** — Այո՛, այո՛, իրաւունք ունիս:



## Ե. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆՔ, ՊԵՐՃ, ԳԵՂԱՄ, ՎԱՀԵ Եւ ՕՄԱՐ

Պերճ, Գեղամ եւ Վահե Օմարի առաջնորդութեամբ ներս կը մտնեն, հիւծուած վիճակի մէջ):

**ՕՄԱՐ.** — Ահաւասիկ, պէյ, ասոնք են ըսած զինուորներս:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Օմար, այս տեսակ բաներ ի՞նչ են, որ ինծի կը հարցնես: Եթէ առանց իմացնելու ասոնք ճամբէիր աւելի ուրախ պիտի ըլլայի: Մեղք թաղաւորին զաւակներուն:

Պերճ, Գեղամ եւ Վահե ռուարած իրարու կը նային:

**ՕՄԱՐ.** — Ներողութիւն պէյ, անգամ մը հարցնել պարտականութիւն սեպեցի:

**ՄՈՒԽԹԱՐ.** — (Հայ տղոց) Դուք այս մօտերը գործող զինուորներէն է՞ք:

Լոռութեամբ իրարու կը նային:

**ՄԱՀՄՈՒՏ.** — (Սուր կերպով տղոց շարժ ու ձեւերը դիտելով) Շատ անօթեցած կ'երեւին:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Դժբաղդութիւն: Օմար, շուտ ասոնք կերակրէ, իրենց հետ վերջը կը տեսնուինք:

**ՕՄԱՐ.** — Շատ աղէկ, պէտ, անհոգ եղիր, քու պատւոյդ սիրոյն արժանաւոր կերպով կը մեծարեմ զիրենք:

Չորսը միասին կը մեկնին:

\* \* \*

**ՄԱՀՄՈՒՏ.** — Ես կ'երդնում, որ ատոնք զինուոր չէին: Զէիր տեսներ թէ որչափ կասկածոտ կանգնած ապուշներու պէս զիրար կը դիտէին եւ հարցումներուն իսկ չէին կրնար պատասխանել: Ատոնք պարզ խարեբաներ են, եւ գուցէ կեավուրներ եղած ըլլան:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Կարելի՞ է որ այդ պէս բան պատահի:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Անկարելիութիւն չկայ, անդամ մը կանչենք ու քննենք զիրենք. դեռ ուշ չէ մեր ձեռքին մէջն են:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Օմար, Օմար:

**ՕՄԱՐ.** — (Դուրսէն) Հրամեցէք, տէր իմ:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Այդ զինուորները անմիջապէս քովս վերադարցուր ըսելիք ունիմ:

**ՕՄԱՐ.** — Բայց պէտ, պատրաստ են ուտելու:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Հոգ չէ վերջը կրնան ուտել:

## Զ. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆՔ, ՊԵՐՃ, ԳԵՂԱՄ, ՎԱՀԵ ԵՒ ՕՄԱՐ

Պերճ, Գեղամ եւ Վահե համարձակ ներս կը մըսնեն: Օմար անոնց ետեւէն, կասկածոտ:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Ես ձեր չավուշը կը ճանչնամ, շատ աղէկ մարդ մըն է, ինչպէս է հիմա:

**ՎԱՀԵ.** — (Գեղամին ականջին) Ա՞ն, որ մեր ար-  
ևան ծարաւած էր:

**ԳԵՂԱՄ.** — (Քիչ մը լոռոքենէ վերջ) Ո՞ր մէկը:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Տուրտու չավուշը:

**ԳԵՂԱՄ.** — (Կասկածու) Շատ աղէկ է, բայց  
այս վերջերս սլաշարի նուազութենէն խիստ նեղուած  
ենք:

**ՄՈՒԽԹԱՐ.** — (Յաղբական Մահմուտին նայե-  
լով) է, ըսէք տեսնեմ ճամբան մինչեւ ո՞ւր շինուած  
է:

**ԳԵՂԱՄ.** — (Ընկերներուն) Տղաք, մեզ կատար-  
եալ զինուոր ըրին, ի՞նչ կ'ըսէք ասոնց:

**ՊԵՐՃ.** — (Ընկերներուն) Պահ մը ըլլանք ինչ որ  
կ'ուղեն, վնաս չունի (Համարձակ առաջ նետուելով)  
Պէյ, այս լեռները չենք ճանչնար մենք. մինակ գիշեր  
ցորեկ կը գործենք բանակներու անցքը դիւրացնելու  
համար:

**ՕՄԱՐ.** — (Զղայնու) Պէյ, կերակուրնին կը  
պաղի կոր:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Ինչպէս է, այս օրերուն շատ  
կեավուրներ ծրարնին ուսերնուն կ'անցնի՞ն այդ լեռ-  
ներէն:

**ԳԵՂԱՄ.** — (Սրտնեղած) Ի՞նչ ըսել կ'ուղես:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Հա՛, հա՛, կ'երեւի բանտէն նոր  
ազատուեր էք: Միւսլման չէ՞ք. չէ՞ք գիտեր որ վըն-  
ուած ենք հայ անունը սրբել մեր երկրի ցանկէն:

Պերն, Գեղամ եւ Վահէ ապէած իրարու կը նա-  
յին:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Ըսէք նայիմ, այդ հաճելի տեսա-  
րաններուն երբէ՞ք չհանդիպեցաք: Զեր առջեւէն  
մրջիւններու պէս անվերջ լալով չէի՞ն քաշուէր:

**ՊԵՐՃ.** — (Զայրոյթը հազիւ զսպելով) Մենք բան  
մըն ալ չենք հասկնար ձեր զրոյցներէն: Ատոնք  
բոլորն ալ նորութիւններ են մեզի համար:

**ՎԱՀԵ.** — (Առաջ նետուելով) Սա նորութիւններուն կրնա՞ք մեզ իրազեկ ընել, որ ձեր ուզած պատասխանները տանք:

**ՕՄԱՐ.** — (Ինիքնիրեն) Կերակուրները անդամ մընալ տաքցնելու եմ, գժուար պատրաստած էի արդէն:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Սա է իրողութիւնը. — բոլոր հայերը, մեծ ու պղտիկ՝ առանց դառակարգի ու սեռի խտրանքով կը ջարդուին ու կը քշուին անապատի խորերը, հոն մեղքերնին քաւելու համար: Իրենց բոլոր հարատութիւնները մեղի կը մնայ: Իբրեւ թուրքեր ուրախ չէ՞ք ի տես այս գործողութիւններուն:

**ՎԱՀԵ.** — Բայց ի՞նչ է անոնց յանցանքը: Անոնք ալ մեղի սկս արարածներ չե՞ն միթէ:

**ԳԵՂԱՄ.** — Ուրի՞շ:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Ասկէ աւելին ուրիշ տեղերէ կը բնաք իմանալ: (Մուխթարը անկիւն մը քաշելով) Ես համոզուած եմ, որ ասոնք շիտակ մարդեր չեն: Զե՞ս տեսներ երեսնին իսլամի շնորհքն իսկ չկայ եւ կրնայ ըլլալ որ բանակէն փախստականներ եղած ըլլան ու կտոր մը հացի համար ինքնութիւննին կեղծեն:

**ՕՄԱՐ.** — (Այս խօսակցութեան ականջ տալով, աչքերը լայն բանալով կը նայի հայ տղոց):

**ՄՈՒԽԹԱՐ.** — Նախ պէտք էր անոնց ինքնութիւնը ճշդէինք:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Այդ էր կերպը:

**ՊԵՐՃ.** — (Այս պահուս առիթէն օգտուելով կը յաջողի պատէն կախուած ատրնանակներէն մէկը գրպանել):

**ՄՈՒԽԹԱՐ.** — Անուննին տեղերնին հարցնենք:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Ես կարծիքիս մէջ սխալ չեմ, ասոնք հայեր են:

**ՕՄԱՐ.** — (Մահմուտի խօսքէն անակնկալի եկած՝ սուր կերպով կը նայի տղոց եւ տեսնելով որ Պերճ

հակառակ կողմ դարձած ատրնանակով կը խաղայ, պէյերուն ականջին կը փսփսայ Պերնը ցոյց տալով) **Տեսէք, զէնք ալ ունին:**

**ՊԵՐԾ.**— (Հակառակ կողմ դարձած գէնիքը ըլտկելով իր ընկերներուն) **Գացէք, իրողութիւնը խոստովանեցէք թէ հայ ենք: Իրենց գիտցածը իրենց՝ եւ մերինը մեզի:**

**ՄԱՀՄՈՒՏ.**— (Պերնին խօսքին վրայ կը հասնի եւ անոր ձեռքէն ատրնանակը յափշտակելով) **Ի՞նչ: Դուք հայ՝ էք:**

**ՊԵՐԾ.**— **Այո՛,** հայ ենք, բայց փամփուշտները մի մոռնար: (Գրպանին հանելով անոնք Մահմուտին վրայ կը նետէ) :

**ՄՈՒԽԹԱՐ.**— (Ատրնանակին նայելով) **Այս իմ ատրճանակս է:**

**ՊԵՐԾ.**— **Այո՛,** քուկդ է: **Փամփուշտներն ալ քուկդ են: Մենք աւազակներ չենք եւ զէնք կրելու սովորութիւն չունինք:**

**ՄԱՀՄՈՒՏ.**— (Պերնին վրայ կը յարձակի եւ գէնիքը անոր կուրծքին ուղղելով) **Դուն պիտի սատկիս:**

**ՄՈՒԽԹԱՐ.**— (Մահմուտին ձեռքը բռնելով) **Խնդրեմ, Մահմուտ պէյ, խոզերուն արիւնովը տունս մի սղծեր:**

**ՄԱՀՄՈՒՏ.**— **Ասոնք պէտք է սատկին:**

**ՕՄԱՐ.**— (Այս իրարանցումներէն կը յաջողի մաս մը գոհարեղիններ եւս վերցնել) :

**ՄՈՒԽԹԱՐ.**— **Այո՛,** ասոնց գոյութիւնը մեզի վտանգ մըն է: **Զեմ ըսեր չսպաննենք, այլ ըստ մեր սովորութեան յանձնենք մեր երկու հաւատարիմ մարդոց որ հեռացնեն ասկէ եւ մաքրեն զանոնք:**

**ՄԱՀՄՈՒՏ.**— **Շատ աղէկ, աճապարէ ուրեմն:**

**ՄՈՒԽԹԱՐ.**— **Օմար, գնա Քեամիլն ու Սիւլէյ-**

մանը կանչէ. ըսէ որ երեք կեավուրներ եւս պատրաստ են մորթուելու:

**ՕՄԱՐ.** — (Վեր ցատկելով) Շատ աղէկ, տէր իմ:  
(Կ'երթայ):

**ՄԱՀՄՈՒՏ.** — (Հայ տղաքը զէնիով արգելի  
տակ առնելով) Մէկ վայրկեանէն կ'ըսեմ ձեզի:

**ՎԱՀԵ.** — (Պաղարիւն կերպով) Ասոր վրա՞յ տւ-  
մենք խորհինք:

**ԳԵՂԱՄ.** — Ուրիշ ակնկալութիւն չունինք ձեզմէ.  
կեանքը ապրած ենք բաւականաչափ:

**ՎԱՀԵ.** — Մեր երեքին կորուստովը հայ ազգը  
վնաս մը չի կրեր: Տակաւին շատ վրիժառու ձեռքեր  
կան:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Լոեցէ՞ք, անպիտաններ, եւ չմե-  
ռած ձեր կերածը մարսեցէք:

**ՊԵՐՃ.** — (Ատելութեամբ լեցուած) Միթէ վրէժ-  
խնդիր մը կրնա՞յ լոել, երբ ան ատելութեամբ լեց-  
ուած՝ լացի փոխարէն կ'ուզէ պայքարիլ եւ գութ  
հայցելու տեղ կ'ուզէ իր դահիճին կուրծքը պատըռ-  
տել: Մահը մէկ է, բայց չենք փափաքիր այսպէս  
աղտոտ կերպով մեռնիլ:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Լոեցէ՞ք: Ահաւասիկ առիւծները  
կուղան: Զեր վրէժն ու պայքարը անոնց պահեցէք:

### Է. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆՔ, ԳԵԱՄԻԼ, ՍԻՒԼԵՅՄԱՆ ԵՒ ՕՄԱՐ

Քեամիլ եւ Սիւլէյման զինուած ներս կը մտնեն  
ուրախ զուարք: Օմար անոնց կը հետեւի:

**ՔԵԱՄԻԼ.** — Ասո՞նք են մորթուելիք կեավուր-  
ները:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Այո՛, ասո՞նք են, բայց աչքերնին  
շատ բաց կ'երեւին. լաւ հսկեցէք որ փորձանք մը  
չպատահի:

**ՍԻՒԼԵՅՄԱՆ.** — Արդէն մեռնելու վրայ են, կը-  
րակ որ ըլլան իրենք զիրենք չեն կրնար վառել:

**ՄՈՒԽԹԱՐ.** — (Հայ տղաքը խուզարկելէ վերջ) Ոեւէ բան չունին վրանին, ոչխարներու պէս են ալ:  
Օմար, չուանները թեր որ կապենք սա անպիտան-  
ները:

**ՕՄԱՐ.** — (Ետեւը բոնած չուանները ցուցնելով) Այդչափը կանխաւ մտածեր էի արդէն: Օրական հա-  
րիւրներ կը կապենք. գիտէի որ չուաններուն պէտք  
սլիտի ունենայինք:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Քեամիլ, շուտ կապեցէք այդ աղ-  
տոտները, չըլլայ որ փախչին:

Քեամիլ եւ Սիւլէյման չուանները առնելով իրար-  
մէ անջատ ձեռքերնին ետեւնին կը կապեն:

**ՄԱՀՄՈՒՏ.** — (Այս միջոցին պատեհութենէն օգ-  
տուելով գոհարեղէններուն մնացած մասը իր պա-  
յուսակը կը լեցնէ եւ առաջ գալով) Շատ աղուոր կա-  
պած էք:

**ՕՄԱՐ.** — (Շարունակ քահ քահ կը խնդայ):

**ՔԵԱՄԻԼ.** — Պէյեր, մենք պատրաստ ենք մեկնե-  
լու ուրիշ հրաման մը ունի՞ք:

**ՄՈՒԽԹԱՐ.** — (Որ առանձին հաշիւներով կ'զբա-  
դեր, ուշադրութեամբ նայելով) Սիւալ էք կապած,  
պէտք էր իրարու շղթայէիք որ ազատ չըլլային:

**ՍԻՒԼԵՅՄԱՆ.** — Հոգ չէ, պէյ, մեր սուրերէն  
երկինքի թռչուններն անգամ չեն կրնար ազատիլ,  
ուր մնաց ասոնց պէս կապուած կիսամեռ թշուա-  
ռականները:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Վստահ եմ թէ չեն կրնար ազա-  
տիլ, գացէք, ոչխարներու պէս մորթելով ականջնին  
մեղի թերէք:

Պերն, Գեղամ եւ Վահէ իրարու կը նային:

**ՕՄԱՐ.** — (Նշմարելով զանոնի) Հա՛, Հա՛, Հո՛ւ:

Քեամիլ եւ Սիւլէյման կալսնաւորներուն զարնելով կը քալեն դէպի դուռ:

**ՕՄԱՐ.** — (Պերճին կապը ցուցնելով) **ՏԵՍԷՔ,** սա կապը ձեռքերէն արիւն պիտի ժայթքեցնէ:

**ՔԵԱՄԻԼ.** — Իրենց աչքերէն ալ պէտք է արիւն ժայթքէ:

Ծեծելով կը մեկնին:

\* \* \*

**ՄՈՒԽԹԱՐ.** — Որչա՛փ հաճոյք կ'զգամ:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Քու կամքիդ որ ձգէի, այդ անպիտաններուն հաց ու պաշար տալով պիտի ճամբէիր իրեւ հարազատ զինուորներ: **ՏԵՍԱՌ** ինչպէս մերկացուցի իրենց բոլոր կեղծիքները:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Շիտակը այս բոլորը քու աչալրջութեանդ կը պարտիմ: Հիմա դառնանք մեր հին դործին: (Գոհարեղինները ծածկուած սեղանին վրայ բերելով) Վիճակ ձգելով մեր բաժիններուն տէր ըլլանք (Բանալով զանոնք, զարմացած) **Ո՞ւր** են այն անգին մանեակները:

**ՄԱՀՄՈՒՏ.** — (Սենեակին մէկ կողմէն անտարբեր) **Պէյ,** ի՞նչ է պատահած, ի՞նչ կայ:

**ՄՈՒԽԹԱՐ.** — Ամէն ինչ կորած է:

**ՄԱՀՄՈՒՏ.** — Ատրճանակը դողցող վարպետ որդին այդ ալ կը նայ ընել:

**ՕՄԱՐ.** — Ես վստահ եմ որ անոնք դողցան այդ թանկագին մանեակները:

**ՄՈՒԽԹԱՐ.** — (Կատղած) Շուտ ըրէք, հետեւինք անոնց եւ մենք սպաննենք այդ դող աւազակները: Թող կորնչին կեղծ մարդիկ աշխարհի երեսէն:

Բոլորը միասին պատէն կախուած զէնֆերն ու իրենց պատկանած առարկաները առնելով կը վազեն դուրս:



### Ը. ՏԵՍԱՐԱՆ

ՔԵԱՄԻԼ, ՍԻՒԼԷՑՄԱՆ, ՊԵՐՃ, ԳԵՂԱՄ ԵՒ ՎԱՀԵ

Տեսարանն է անտառու ձորակ մը։ Արեւը մարելու մօս է։ Հեռուէն աններդաշնակ գեղջկական երգեր կը լսուին։

Պերճ, Գեղամ եւ Վահէ Քեամիլի եւ Սիւլէյմանի հարուածներով անգթաբար ներս կը մղուին, որոնք գետին կը տարածուին զգեստնուած։

**ՔԵԱՄԻԼ.**— (Քրտինքը սրբելով) *Դիւրին ուռուելիք որս չեն եղեր*։

**ՍԻՒԼԷՑՄԱՆ.**— (Քեամիլին) *Տես', մեռնելու վրայ են՝ ու տակաւին աչքերնին բոցերու պէս կը վառի, կարծես կ'ուզեն մեզ լափել*։

Քեամիլ եւ Սիւլէյման իրենց դանակները սրելով կը պարապին, մինչ միւսները կը տարունակեն իրենց առանձին խոսակցութիւնը։

**ՊԵՐՃ.**— *Որչա'փ ինքզինքս բախտաւոր պիտի նկատէի երբ ձեր տեղ առանձինս այս ծանր կապերուն տակ զոհուէի, կամ կուրցած ըլլայի եւ այս տեսարանը չտեսնէի։ Զէի ցանկար տեսնել ձեղ այս անարդ կապերուն տակ...*

**ՎԱՀԵ.**— *Պերճ, այս կապերը մեզի կը պատկանին, քանզի հայ ծնած եւ հայ ապրած ենք։ Պատի՛ւ մեզ...*

**ԳԵՂԱՄ.**— (Հեռուն ցուցնելով) *Տեսէք, սա տարածուած թարմ ու հին յօշոտուած մարմինները, եւ անդին դիզուած չոր կմախքները*։

**ՎԱՀԵ.**— (Ակնարկը այն կողմ ձգելով) *Մարդիկ այս վայրը սպանդանոցի վերածած են։ Ատոնք բոլարն ալ մեր քոյրերն ու եղբայրներն են։ Համբուրենք այդ անթաղ անդին մասունքները, որոնք քա-*

Հաբար զոհուած են նպատակի մը համար եւ անվարան հետեւինք այդ ուղիին:

**ՔԵԱՄԻԼ.** — (Դանակը ձեռքին ընդմիջելով անոնց խօսքը) Հա՛, Հա՛, պատրաստ էք, մօտ եկէք տեսնեմ:

**ՊԵՐՃ.** — (Անոր ճակտին տնկուելով, ատելութեամբ) Այո՛, առաջ զիս զարկէք, չեմ ուզեր ողջ աչքերովս տեսնել այն գարշելիները, որոնք կ'ատեմ, եւ իսպառ կաշկանդուած ու կապուած՝ զրկուած եմ ինքնապաշտպանութենէ:

Քեամիլ եւ Սիլէյման սմբած մնացած են այս տեսարանին առջեւ:

**ՊԵՐՃ.** — Ի՞նչ կ'սպասէք տակաւին, ինչո՞ւ չէք շարժիր:

**ՍԻՒԼԵՅՄԱՆ.** — Զե՞ս լար, զութ չե՞ս հայցեր, չե՞ս գիտեր որ պիտի մորթուիս:

**ՊԵՐՃ.** — Ի՞նչ է լացը, ի՞նչ է զութը: Միթէ՞ կարելի է ճիւաղներէն զութ հայցել, լալ ու աղաչել: Ո՞չ, մենք կ'ուզենք պայքարիլ եթէ կրնանք, իսկ հակառակ պարագային մեր անվեհերութեամբ սարսեցընել մեր թշնամին:

**ՔԵԱՄԻԼ.** — (Ուժգին ետ հրելով զՊերն) Կորի՛ր, խելագար, ի պատիժ այդ յանդգնութեանդ ընկերներուդ չարչարանքներուն ականատես ըլլալէ վերջ պիտի սատկիս: Գնա եւ լոէ: (Գեղամը դէպի առաջ բաւելով) Եկո՛ւր, Սիփրահ սէնտէն, պէրէֆէր Ալլահտան:

Գեղամը կը ձգեն գետին, Սիւլէյման բոլոր ոյժով չոքած է անոր վրայ, Քեամիլ դանակը ձեռքին պատրաստ է գործողութեան, մինչ Պերն եւ Վահէ ետեւէն գաղտնի խօսակցութեան մէջ են:

**ՊԵՐՃ.** — (Կամաց) Վահէ, չեմ ուզեր այդ տեսարանը տեսնել եւ ձրի մեռնիլ. ոտքերնիս ու ակուանիս աղատ են, ընենք ինչ որ կրնանք:

**ՔԵԱՄԻԼ.** — Եա՛ փիր, (Դանակը կը քաւէ:)

Դանակի շարժման հետ միասին Պերճ Քեամիլին եւ Վահէ Սիւլէյմանին ետեւէն ոտքի ուժգին հարուածներով կը փռեն զետին, որոնք դէպֆէն անտեղեակ անշարժ կը մնան ապշահար: Պերճ եւ Վահէ ձեռնակապ առիւծներու պէս կը խոյանան քուրքերուն վըրայ: Պերճ Քեամիլին կոնակէն խածնելով դէմֆին վրայ զետին կը տարածէ զայն, եւ անոր մարմինը իր սրունիցներուն մէջ առնելով կը յաջողի լոեցնել քըւնամին: Վահէ եւ Սիւլէյման կը շարունակեն կոփու քաւալգլոր:

**ՊԵՐՃ.** — (Հազիւ լսելի) Շարժի՛ր, Գեղա՛մ:

**ԳԵՂԱՄ.** — (Գլուխը բարձրացնելով) Պերճ, Երկինքն ենք թէ երկիրը: (Շուրջը զարմացական ակնարկ մը կը ձգէ եւ արագ վեր տրցելով) Այսպէս կըռռուելով կ'ուզէի մեռնիլ: (Պերճին օգնութեան կը փութայ) Ասպարէզը քաջերուն է, տոկացէ՛ք, տըղաք:

**ՊԵՐՃ.** — Գեղամ, ես շատ հանդիսաւ կ'զգամ, վահէին օդնէ:

**ԳԵՂԱՄ.** — (Զեռքերը տակաւին ետեւը կապուած, Քեամիլին մէջքէն կը քաւէ անոր ատրնանակը, եւ տեսնելով միւսներուն կատաղի կոփու, կը վազէ եւ ատրնանակը Սիւլէյմանին ուղղելով) Անշա՛րժ եւ ձեռքերդ վեր . . .

**ՍԻՒԼԷՅՄԱՆ.** — (Անտարբեր) Ժամանակ չունիմ ձեռքերս վեր առնելու:

**ԳԵՂԱՄ.** — (Տիրական) անշա՛րժ եւ ձեռքերդ վեր, եթէ ոչ . . .

**ՍԻՒԼԷՅՄԱՆ.** — (Նկատելով քէ Գեղամն է) Այդպէս ձեռքերդ կապուած կ'ուզես զի՞ս վախցնել:

Սիւլէյման կը ձգէ Վահէն եւ Գեղամին կրակած պահուն Վահէ ոտքով կը զարնէ քուրքին քեւին եւ զէնիքը օդին մէջ պայթելով կ'իյնայ ձեռքէն: Գեղամ

նմանապէս կը կրակէ եւ գնդակը կը վրիպի։ Վահէ կը յափշտակէ գետնէն Սիւլէյմանին ատրնանակը ու ինք մէկ կողմէն եւ Գեղամ միւս կողմէն զէնֆերը կ'ուղղեն Սիւլէյմանին վրայ։

**ԳԵՂԱՄ.** — Շո՛ւ, արձակէ ատոր ձեռքերը։

**ՍԻՒԼԷՅՄԱՆ.** — (Սարսափահար) Շատ աղէկ, աղա՛։ (Դողդալով կը ժակէ Վահէին կապը)։

**ԳԵՂԱՄ.** — Վահէ, նոյն կապերով կապէ՛ իր ձեռքերը։

**ՎԱՀԷ.** — Պերճ, այս ալ երազ մըն է։ բոպէ մը եւս դիմացիր։ (Սիւլէյմանը կը կապէ ու Գեղամին հսկողութեան կը ձգէ. եւ վազելով ոտքը Քեամիլին վզին կը դնէ եւ զէնքը գանկին ուղղելով) Շարունակէ եթէ կրնաս, եւ կամ կ'ուզես անմիջապէս մահանալ։

**ՔԵԱՄԻԼ.** — Բայց, չես տեսներ, աղա՛, ես եմ կաշկանդուողը, ոսկորներս մէջս շաղուած են։

**ՊԵՐՃ.** — (Քեամիլը ազատ ձգելով) Այս վիճակովս տակաւին կրնամ շատերուն յաղթել։ Բաւական է որ կը չնչեմ։

**ՎԱՀԷ.** — (Զէնքը մէկ ձեռքին՝ ուշադրութիւնը Քեամիլին վրայ, միւս ձեռքով Պերճին ձեռքը կ'արձակէ։ Քեամիլ հակայարձակման փորձեր կ'ընէ, բայց կը յաջողի գայն կարգի պահել։)

**ՊԵՐՃ.** — (Քեամիլին ձեռքերը ետեւը կը կապէ նոյն կապերով) Աշխարհ միշտ կը դառնայ։ (Գեղամին կապերն ալ ժակելով) Ամէն ինչ վերջացաւ առանց արիւնչեղութեան։

Թուրքերուն զէնքերով կը զինուին։

**ՔԵԱՄԻԼ.** — (Անոնց ոտքը իյնալով) Գթացէ՛ք, ո՛վ քաջեր։

**ՍԻՒԼԷՅՄԱՆ.** — Խնայեցէ՛ք մեզի։

**ՎԱՀԷ.** — Մեր աչքերէն արիւն պիտի ժայթքեցընէիք, այնպէս չէ՞։

**ԴՈՒՐՍԻՆ ԶԱՅՆԵՐ.** — Սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք։

**ՊԵՐՃ.** — (Այն կողմ նայելով) *Տղա՛ք, աչքերէն*  
արիւն ժայթքեցնելիքներն են, որոնք կուդան։ Ասոնց  
բերանները կապենք որ չկրնան պոռալ։

Քեամիլին եւ Սիւլէյմանին բերանները քաւկի-  
նակներով կապելով, հոն գտնուող քուփերուն մէջ կը  
պահուըտին։

### Թ. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆՔ, ՄՈՒԽԹԱՐ, ՄԱՀՄՈՒՏ ԵՒ ՕՄԱՐ

Մուխթար, Մահմուտ եւ Օմար հիւ ի հեւ կուրօ-  
րեն ներս կ'իյնան։

**ՄՈՒԽԹԱՐ.** — (Տակաւին դրան մէջէն) *Ո՞ւր են*  
*անոնք*։

Պերն, Գեղամ եւ Վահէ կայծակի արագութեամբ  
զէն ի ձեռին վեր կը ցատքեն, եւ զէնֆերնին անոնց  
ուղղելով,

**ՊԵՐՃ.** — *Անշա՛րժ,*

**ՎԱՀԷ.** — *Վրէ՛ժ,*

**ԳԵՂԱՄ.** — *Ատելութի՛ւն.*

Մուխթար, Մահմուտ եւ Օմար սարսափահար՝  
գետին կը քափին։

**ՊԵՐՃ.** — *Վահէ, առաջ դնա՛, եւ ատոնց զէնքերը*  
*առ*։

**ՄԱՀՄՈՒՏ.** — *Այդչափը ձեր կարողութիւնէն*  
բարձր է։ Իրաւունք չունիք մեր վրայ ձեռք բարձ-  
րացնելու։ Այս Մջանին իշխանութիւնը մեզի կը  
պատկանի։

**ՎԱՀԷ.** — Գուցէ այդպէս է, բայց դուք մեզի  
սորվեցուցիք՝ որ իրաւունքը (զէնֆը ցուցնելով) ա-  
սոր ծայրն է։

**ՊԵՐՃ Եւ ԳԵՂԱՄ.** — (Զէնֆերը անոնց կուրծքին  
ուղղելով) *Մի՛ շարժիք, ձեր զէնքերը ձեզի դէմ են*  
*դարձեր...*

**ՎԱՀԵ.** — (Բոլոր ունեցած զենքերնին կ'առնէ) :

**ՕՄԱՐ.** — (Անտարբեր կերպով կ'օգնէ Վահեին) :

**ՄՈՒԽԹԱՐ.** — (Շուրջը նայելով) **ՔԵԱԺԻԼ,** **ՔԵԱՑԻԼ,** **ՍԻՎԵՋՄԱՆ,** **Ո՞ւր էք:**

Քեամիլ եւ Սիւլէյման զլուխնին կը բարձրացնեն :

**ՕՄԱՐ.** — (Կը տեսնէ զանոնին եւ բարձր խնդալով) **ՏԵՍԷՔ,** **ՄԵՍԷՔ,** **ՀԱՅՈԳ** **ԱՀՔԵՐԷՆ** **ԱՐԻՆ** **ԱԼԻՄԻ** **ԺԱՄԹՔԵԳՆԷՒԽ:** (Քեամիլին քով երթալով) **Ամօ՛թ** **ՃԵՂԻ...** **Թո՛ւհ...**

**ՎԱՀԵ.** — (Օմարին) **Ի՞նչ,** **Ի՞նչ ըսիր:**

**ՕՄԱՐ.** — (Դեմքին ժպիտ կեղծելով եւ երկչու ետ ետ քաշուելով) **Պը,** **պը,** **պա,** **պա.** **պատիւ իրենց:**

**ՎԱՀԵ.** — (Բարձր խնդալով) **Պատի՛ւ զէնքերուն:**

Պերն եւ Գեղամ զենքերնին քուրքերուն ուղղած են անշարժ :

**ՄԱՀՄՈՒՏ.** — **Ո՞ւր ենք մենք:**

**ՊԵՐՁ.** — **Հոն ուր որ ճեղ կը փնտոէինք:**

**ՎԱՀԵ.** — Կը ծրագրէինք մօտիկ ապագայի մը մէջ՝ ճեր տան մէջ անդամ մը եւս տեսնուիլ ճեղի հետ : Աղէկ որ դուք եկաք եւ ճեր տունն ու տեղը խնայեցիք ճեր ընտանիքներու սիրոյն :

**ԳԵՂԱՄ.** — **Վահէ՛,** **Ժամավաճառ չըլանք,** **Հո՛ւտ ատոնց ճեռքերը կապէ,** **Եւ ասկէ հեռանանք ուրիշներ չեկած:**

**ՎԱՀԵ.** — **Չուան չունինք:**

**ՊԵՐՁ.** — **Փաթթոցնին կընայ այդ նպատակին ծառայել:**

**ՕՄԱՐ.** — **Կեցի՛ր բարեկամ, այդ ճանճրութեան մի՛ ենթարկուիր:** (Արդէն ետեւը բռնած կապերը տալով) **Ահաւասիկ էն զօրաւոր կապերը որ ունէինք տան մէջ:** **Մուխթար պէյի հրամանով այս կապերը միշտ հետս կը կրեմ հաւանակութիւնները նկատի ունենալով:**

**ՊԵՐՃ.**— (Կատակելով) *Ապլի՛ս, Օմար, գործութիւննես:*

**ՎԱՀԵ.**— (Զուանները կ'առնէ եւ հակառակ իրենց դժկամութեան, անոնց ձեռքերը կապելով) *Այս ալ վերջացաւ խաղաղութեամբ:*

**ՕՄԱՐ.**— (Այս միջոցին կը սուլէ արագ արագ, մաս գալով) *Յիշեցէք, ես ձեզի կերակուր տուի: Մի՛ մոռնաք, որ չուանները ես ճարեցի:*

**ՄՈՒԽԻԹԱՐ.**— (Խորամանկօրէն) *Ես շատ կը սիրեմ ձեզ պէս քաջերը:*

**ՕՄԱՐ.**— (Հեգնական) *Շատ կը սիրեմ ձեզ պէս քաջերը . . .*

**ՊԵՐՃ.**— *Բայց, դժբաղդաբար իրական քաջերը ձեզ պէս վատերը չեն կրնար սիրել: Մեր այդ յատկութիւնը գնահատելու էիք, երբ անօթի ստիպուցանք ձեր դուռը ծեծելու:*

**ՕՄԱՐ.**— *Ես էի մինակ այդպէս ընողը: Ես գիտէի ձեր քաջութիւնը:*

**ՄԱՀՄՈՒՏ.**— *Առատօրէն պիտի վարձատրուիք, եթէ մեզ ազատէք:*

**ՎԱՀԵ.**— *Դուք պէտք է կորսուիք, որ քանի մը հայեր գոնէ՝ կարենան ազատ չնչել, եւ արդէն այդ է մեր մեծագոյն վարձատրութիւնը:*

**ԳԵՂԱՄ.**— *Տղա՛ք, ի՞նչ է այն բանակը, որ այսպէս ուշ ժամանակ յամրօրէն կ'ընթանայ դաշտին երեսէն:*

**ՕՄԱՐ.**— (Գեղամին ականջին) *Անիկա այս շըրջանին հայութեան վերջին կարաւանն է, որ կը քըշուի: Խեղճերը իրենք ալ չեն դիտեր ուր որ կ'երթան: (Պէյերը ցուցնելով) Եթէ ասոնք հոս զբաղուած չըլլային, հիմա անոնք պիտի բռնաբարուէին ու կողոպտուէին ասոնց միջոցով:*

**ՎԱՀԵ.**— (Լսելով այս խօսքերը) *Տեսէ՛ք, այն կարաւանը եւ մոռցէք այս ձեր կապերը: (Անոնց*

վրաները զննելով Մահմուտին վրայէն կը գտնէ այն գոհարեղէնները, որոնք վերցուցած էր երբ Մուխ-  
քարին քնակարանը կը գտնուէին, եւ անոնց վրայ փորագրուած գիրերը կը կարդայ) «Կ. Թ.», «Ա. Ք.», եւ այլն. : Ասոնք բոլորը հայերու ապրանքներ են:

**ՕՄԱՐ.**— (Իրեն գրպանածներն ալ տալով) Ա-  
սոնց մէկ մասն ալ հոս է:

**ՄՈՒԽՔԱՐ.**— (Սարսուռով մը) Արժանի ենք  
այս վիճակին:

**ՄԱՀՄՈՒՏ.**— Ասոնք բոլորն ալ գնած եմ:

**ՕՄԱՐ.**— (Ինքնիրեն, հեգնական) Ասոնք բոլորն  
ալ գնած եմ... (Վահէին ականջին) Մի՛ հաւատար,  
կողոպուտ են:

**ՄՈՒԽՔԱՐ.**— Գթացէ՛ք...

**ՕՄԱՐ.**— (Հեգնական) Գթացէ՛ք... հա՛, հա՛,  
վախնամ շատ ուշ է:

**ՊԵՐՃ.**— Ինչո՞ւ կուլաք: Զեր խիղճը զձեղ չի  
յանդիմանե՞ր: (Հեռուն ցոյց տալով) Տեսէ՛ք, սա  
անթաղ մարմինները, նա զգետնուած մայրերը, ա-  
նոնց կուրծքերուն յօշոտուած երախանները եւ անդիի  
չորցած անթիւ կմախքները, եւ վերջապէս այն դաշ-  
տին երեսէն քաշուող կարաւանը, եւ այն դժբաղդ  
մայրերը, որոնք երախանները դիրկերնուն արիւն ար-  
ցունք կը քամեն անմխիթար: Զեր այսչափ տարա-  
ծած սարսափինները բաւական չէին միթէ՞՝, որ ձեզմէ  
կտոր մը չոր հաց եւ դաւաթ մը պաղ ջուր խնդրող-  
ներն ալ շղթայակապ նոյն վիճակին մատնելու կը  
յանդգնիք: Եթէ մենք ներենք, արդեօ՞ք արդարու-  
թիւնը կայծակնահար չպիտի ձգէ ձեզ: Որո՞ւն վաս-  
տակներովը այնքան յղփացած էիք գինովութեան  
մէջ:

**ՕՄԱՐ.**— (Այս յանդիմանութեանց պահուն իր  
կախ երեսէն երբեմն համակրական ժպիտներ կեղծե-

լով գլուխը կը տարժէ հաստատելու համար, եւ կեղծ ցաւակցի արտայայտութեամբ Մուխքարին կոնակը ծեծելով) *Մոռցիր այն օրերը, պէ՛յ, մոռցի՛ր:*

**ՊԵՐՃ.** — *Հնկերներ, հեռանանք ասկից:* (Թուրքերը նամբու կը դնէ) :

**ՕՄԱՐ.** — (Թուրքերը խարազանելով) *Կարգի մտէ՛ք:*

*Պերն, Գեղամ եւ Վահէ բարձր կը խնդան:*

**ՎԱՀԷ.** — *Հա՛, Հա՛, մենք բիւսկիւլիւ ոստիկանը գտանք:*

**ՊԵՐՃ.** — *Օմար, դուն ազատ ես տունդ երթալու:* Գնա՛, եւ պատմէ ի՛նչ որ տեսար:

**ՕՄԱՐ.** — *Իրա՞ւ... Անշուշտ ամէն բան պիտի պատմեմ:* (Մուխքարին կոնակը ծեծելով) *Աստուած հետդ ըլլայ, պէյ:* (Կը մեկնի բանտէն ազատուողի ուրախութեամբ) :

*Միւսներ նմանապէս կը մեկնին հակառակ կողմէն:*

**ՕՄԱՐ.** — (Արագ ներս վազելով) *Մուխթար պէյ, Մուխթար պէյ, տասը տարուայ վարձքս քովդ դիզուած կը մնայ, ո՞վ պիտի վճարէ իրաւունքս:* (Պատասխան չստանալով) *Սատկելիք մէկ մըն էր, իր մահէն վերջ դրամս հոգ չեմ ըներ:* Ես հայոցմէ շատ կը տանջուէի իր հրամանին տակ (Ցատքոտելով կը մեկնի) :

Վարագոյրը կ'իջնէ

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ  
ԱՐԱՐՈՒԱԾԻՆ



## ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Ա. ՏԵՍԱՐԱՆ

ՃԱՖԵՐ, ԹԱԳՈՒՀԻ ԵՒ ՊԵՐՃՈՒՀԻ

**S**ԵՍԱՐԱՆՆ է խոնաւ մուք խան մը:  
Թագուհի եւ Պերճուհի՝ յոգնած ու կիսամերկ՝  
Ճափէրի հարուածներուն տակ ներս մղուելով զե-  
տին կը տարածուին տնչասպառ:

**ՃԱՖԵՐ.**— (Ինքնիրեն) Մեռնելով ալ չեն հատ-  
նիր, որ մենք ալ աղատինք իրենց հետ սա անապա-  
տի անվերջ ճամբորդութիւնէն: (Բարկացոտ) Հո՛ս է  
այս գիշերուայ ձեր տեղը:

**ԹԱԳՈՒՀԻ.**— Բայց, այս խան մը ըլլալէ աւելի  
աղբանոց մըն է... ի՞նչ գարշահոտութիւն է, որ կը  
տիրէ:

**ՃԱՖԵՐ.**— Ասիկա քիչ մըն ալ աւելի է ձեզի հա-  
մար: Ես հանգիստի պէտքութիւն ունիմ, լոեցէ՛ք,  
եւ զիս մի՛ կատղեցնէք: (Դուրս կ'ելլէ):

**ՊԵՐՃՈՒՀԻ.**— Մայրի՛կ, պիտի մարիմ... Կա-  
թիւ մը ջո՛ւր... Պատառ մը հա՛ց...

**ՃԱՖԵՐ.**— (Ներս խուժելով) Պատուիրեցի որ  
ճայն չըլլայ, եւ դուք հաց ու ջուրի կարօտով քունս  
խանգարել կ'ուզէք: Ահաւասիկ ձեր հացն ու ջուրը,  
որուն օրական երեք անգամ պէտքութիւն ունիք  
զգաստութեան գալու համար: (Խարազանով անխը-  
նայ կ'իջեցնէ վրանին):

**ԹԱԳՈՒՀԻ.** — (Իր քեւերով Պերճուհին պատասպանելով) **Զա՛րկ,** մինչեւ որ յոդնիս. զա՛րկ որ յադենաս. . .

**ՃԱՖԵՐ.** — Պողպատեայ մարմիններ ունին, որչա՛փ չարչարուին նոյնքան ուրախ են: (Դուրս կ'ելլէ):

**ՊԵՐՃՈՒՀԻ.** — (Մօրը արցունիքը տեսնելով) **Մի՛** լար, մայրիկ, ո՛չ անօթի եմ. . . ո՛չ ալ ծարաւ. . . Աստուած պիտի օդնէ մեղի:

**ԹԱԳՈՒՀԻ.** — (Պերճուհին համբուրելով) **Ա՛Հ,** անուշիկս, մինակ մխիթարութիւնս. . . (Ծունկին վըրայ պառկեցնելով) **Քնացիր,** անուշիկս, որ քիչ մը հանդստանաս:

**ՊԵՐՃՈՒՀԻ.** — **Մայրիկ,** աղօթելէս վերջ: (Վայրկեան մը ծունկի գալէ վերջ, կ'իյնայ մօրը գիրկը ու կը քնանայ):

**ԹԱԳՈՒՀԻ.** — (Լաքով փաքքուած ոտքերը ճանկելով) **Ո՛Հ,** ոտքերս խաշեր են. . . (Մարմինը շփելով) ոսկորներս ջախջախուեր են. . . Խարազաններու հարուածները պալարներու կոյտի մը վերածած են ամբողջ մարմինս: **Ո՛Հ,** կ'զգամ, հոգիս արդէն վըտտած մարմնէս թել առ թել կը քակուի. . . Պիտի մեռնիմ հայրենիքէս հեռու այս օտար երկինքին տակ: Հայրենի՛ք, Հայրենի՛ք, քաղցր Հայրենի՛ք, զուլաւ ջուրերդ դեռ կը վազե՞ն անվերջ, ձմրան գարունը կանխելով կոռոնկներն ու ծիծեռնակները պիտի քաշուի՞ն ծոցդ. սիրուն սոխակներդ պիտի թայլայլե՞ն անդադար. . . **Ո՛Հ,** չէ՛, չէ՛, թո՛ղ դադրին, թո՛ղ դադրին ալդ բոլորը, բակէ դուռներդ ատոնց առջեւ որ կարենաս սուզդ պահել ու ցաւդ երգել: (Մեղմ կ'երգէ):

«Հայրենի՛ք, Հայրենի՛ք,  
Օդդ սիրուն, ջուրդ սիրուն դուն սիրուն.  
Պէս պէս գոյնով ծաղիկներդ զարդարուն. . .»

**ՃԱՖԵՐ.** — (Դուրսէն) Հազիւ քնացեր էի, հիմա  
ալ ձեր այդ աղտոտ երգը մտի՞կ ընելու եմ. լոէ՛ եթէ  
ոչ . . .

**ԹԱԳՈՒՀԻԿԻ.** — (Անտարբեր մելամաղատ կը շա-  
րունակէ)

«Օդդ սիրուն ջուրդ սիրուն դուն սիրուն . . .»

**ՃԱՖԵՐ.** — (կատղած) Զեմ ուզեր այդ աղտոտ  
լեզուն լսել:

**ԹԱԳՈՒՀԻԿԻ.** — (Զղայնոտ) Աղտոտը դուն ես. իմ  
լեզուս եւ երգս սուրբ են: Անոնք օրհնուած եւ նուի-  
րադործուած են: Տուն տեղ, այդի արօտ ձգած եմ,  
ծերունի ամուսինս եւ երիտասարդ զաւակս ջարդ ու  
փշուր եղած են: Այսքան զուլումներէ վերջ լեզուիս  
հետ հիւծած մարմինս եւ մէկ հատիկ աղջիկս է մնա-  
ցեր, եւ երբէ՛ք չպիտի դադրիմ իմ քաղցր լեզուով  
ցանկալի հայրենիքս երդելէ:

**ՃԱՖԵՐ.** — (Խարազանը ձեռքին վազելով) Այդ  
մէկ հատիկ աղջիկդ ալ ես սպաննեմ, որ առանձինդ  
մնաս: (Պերնուհիին քեւէն բոնած վեր ֆաւելով խա-  
րազանը իջեցուցած պահուն, Պերնուհիին դէմքը  
տեսնելով խարազանը ձեռքէն կ'իյնայ) Այս ի՛նչ գե-  
ղեցկութիւն է: (Քիչ մը մտածելով) Այս աղջիկը հա-  
րուստի մը կրնամ ծախել մեծ գումարով մը: (Պեր-  
նուհիին ֆաւելով դուրս կը ֆալէ): Այսպէս գեղեց-  
կութիւն . . .

**ՊԵՐՃՈՒՀԻԿԻ.** — Մայրի՛կ, մայրի՛կ, աղատէ՛ զիս,  
չե՛մ ուզեր այս ճիւաղին հետ երթալ:

**ԹԱԳՈՒՀԻԿԻ.** — Մահը մինա՛կ կրնայ բաժնել զիս  
աղջիկէս: (Կը յարձակի):

**ՃԱՖԵՐ.** — (Քաշելով Պերնուհիին) Զես կրնար

զինքը ձեռքէս աղատել:

Կոիւով կը հեռանան:

## Բ. ՏԵՍԱՐԱՆ

## ԶԱՊԵԼ ԵՒ ԶԱՐԵՀ

Տեսարանն է անապատ մը։ Հեռուն անապատին խորը կանաչութիւն եւ ջուր կը տեսնուի։

**ԶԱՊԵԼ.**— (Վտիտ, կիսամերկ, ձեռքը ծրաբ մը խարխափելով ներս կը մտնէ) **Ո՛Հ,** ահաւասիկ ջուր կը տեսնեմ։ (Քալելու նիզ մը ընելով կ'իյնայ ընկնուած) **Կը մարիմ...** կաթիլ մը ջուր։ **Ո՛Հ,** ումպ մը միայն, կ'ուզեմ ապրիլ։ (Թեւերը ջուր երկարելով կը սողայ) **Ա՛Հ,** ումպ մը միայն... (ջուրը չհասած կը մնայ զգայազիրկ)։

**ԶԱՐԵՀ.**— (Նոյն վիճակով, հակառակ կողմէն հալածական քովնուի ետ ետ նայելով վազած պահուն՝ ոտքերը Զապէլին կառչելով կ'իյնայ, եւ ինքին Զապէլին հետ դէմ դիմաց կը գտնէ)։

**ԶԱՊԵԼ.**— (Հոգեվարքով) **Ո՛Հ,** անդութներ, ձղեցէ՛ք որ ազատ մեռնիմ։

**ԶԱՐԵՀ.**— (Աչքերը լայն լայն քանալով) **Ո՞Վ Ես դուն։**

**ԶԱՊԵԼ.**— Իսկ դուն **ո՞Վ Ես,** որ տակաւին չես դադրիր ինձ պէս մահամերձ տկար մը հալածելէ։

**ԶԱՐԵՀ.**— (Զարմացած) Բայց, ես ալ հալածողներէս կը փախչիմ։

**ԶԱՊԵԼ.**— (Աչքերը քերեւ քանալով) **Ուրեմն,** **ո՞Վ Ես։**

**ԶԱՐԵՀ.**— **Ես հայ մըն եմ։ Դուն **ո՞Վ Ես.****

**ԶԱՊԵԼ.**— **Ո՛Հ,** **Ես ալ...** Ծարաւ եմ չեմ կրնար խօսիլ։

**ԶԱՐԵՀ.**— (Շուրջը նայելով) **Ահաւասիկ,** քիչ անդին ջուր կը տեսնուի երթանք որ խմես։ (Գրկած ջուրի կը տանի եւ ձեռքով կը խմցնէ ու գլուխը ծունկին ձգելով) **Պահ մը հանգստացիր։**

**ԶԱՊԵԼ.** — (Աչքերը բանալով մեղմ ժպիտով մը) Անգին հրեշտակ . . . կեանքս փրկեցիր . . . (Պահ մը լուռ) Շատ անօթի կ'զգած: (Ծրարէն զանազան խոտեր հանելով) Այս է կերակուրս, որ չէի կրցիր քեզ մը առաջ ուտել: Ա՛ռ, դուն ալ կեր որ օր մը աւելի առլրինք:

Միասին կ'ուտեն հետաքար իրարու աչքերուն նայելով:

**ԶԱՐԵՀ.** — Բայց, ո՞վ ես դուն, ի՞նչպէս այս վիճակին մատնուեցար:

**ԶԱՊԵԼ.** — Ես «Ք» քաղաքացի եմ եւ անունս Զապէլ է: Բոլոր պարագաներս տառապանքի ճամբուն մէջ ինկած են, իսկ ես մինչեւ հոս գոյութեանս քարշ տուած եմ:

**ԶԱՐԵՀ.** — Քանի մը դրուագներ կրնա՞ս պատմել այդ կեանքէդ:

**ԶԱՊԵԼ.** — Խիստ դժուար է ինձ համար այդ կեանքէս վերյիշումներ ընել:

**ԶԱՐԵՀ.** — Քանի որ քաջաբար տոկացեր ես այդ բոլորին՝ պատմառ մը չկայ որ վերյիշում մը անհանգստութեան մատնէ քեզ:

**ԶԱՊԵԼ.** — Կարելի չէ՞ որ հօրս եւ եղբայրներուս վրայ ոեւէ բան պատմեմ, որոնք վատ պէյերու եւ կեղծ պաշտօնեաներու սուրերով յօշոտուեցան, եւ ո՛չ ալ մօրս եւ միւսներուն մասին, այլ կ'ուզեմ պըզտիկ մաս մը պատմել այս վերջին կեանքէս. — Մենք խումբ մը մեծ ու պղտիկ հայեր՝ ամիսներով հացի կարօտ խոտաճարակութեամբ «Ա» քաղաքին մօտիկ բացօղեայ շրջանի մը մէջ կ'ապրէինք: Երբեմն քաղաք կ'երթայինք կտոր մը հաց ճարելու յոյսով՝ բայց, չէինք կրնար: Կը զիջանէինք նոյն իսկ շուներայց, չէինք կրնար: Կը զիջանէինք նոյն իսկ շուներու հետ փողոցը թափթփած ոսկորները կրծել, հոն տեղի պտուղներու կեղեւները եւ աղտոտ բանջարեղէնները ուտել, բայց չէին ձգեր: Իբրեւ հաճոյք

միշտ կը հալածէին մեղ վողոցէ փողոց, եւ մենք ինք-նապաշտպանութեան միջոց մինակ գետնին քարերը ունէինք, բայց այս պարագային դժբաղդաբար շատ անգամ մեր գլուխները կը ծակէին։ Ամրան խիստ տաքին եւ ձմրան սոսկալի ցուրտին պատճառով՝ տարափոխիկ հիւանդութիւնները մեծ մասս մաքրեցին, որոնցմէ շատեր անթաղ մնացին։ Մէկ մասս յափըշտակուեցանք իբրեւ գերիներ աշխատցնելու կամ հարէմներ ճոխացնելու համար, եւ մնացեալիս վիճակը անտանելի դառնալով՝ խոխւներու պէս ցրուեցանք չորս կողմ։ Իսկ ես երեք ընկերուհիներու հետ դաշտը ինկայ անզութ մարդկութեան ծաղր ու ծանակ չըլլալու համար։ Հոն տեսանք որ երկինքին թռչունները շուներու հետ պար կը բռնէին դիակի մը շուրջ։ Չորսս միասին վազեցինք անկէ բաժին մըն ալ մեղի հանելու համար . . . Ո՞հ, չեմ կրնար ըսել . . . (Զդագութիւն մը կ'ունենայ)։

**ԶԱՐԵՀ.** — Շարունակէ, Զապէլ, բոլորս ալ ենթարկուած ենք այդ վիճակին։

**ԶԱՊԻԼ.** — Զարմանքով տեսանք որ մեզմէ օր մը առաջ բաժնուող աղջկայ մը մարմինն էր ան, հազիւհողին աւանդած։

**ԶԱՐԵՀ.** — (Ինքնիրեն) Պատճութեան հերոսուհի . . . Շարունակէ, Զապէլ։

**ԶԱՊԻԼ.** — Քիչ վերջ տկարութեանս պատճառով ընկերուհիներս կորսնցուցի։ Մարմնիս վրայ մինակ մորթս եւ գլխուս վրայ մազս մնաց աղտեղութեանց մէջ թաղուած։ Աչքերս խաւարեցան եւ երկինքի դուռները բաց տեսայ։ Գիտէի թէ պիտի մեռնիմ եւ կրցածիս չափ հեռացաւ կոյս մարմինս անարդանքի չենթարկելու համար։ Եւ, հոս կաթիլ մը ջուրի պապակով ինկայ ու դուն վրայ հասար։ Ահա՛ վիճակս։ (Կը զանայ լացը զապել)։

**ԶԱՐԵՀ.** — (Կարեկցաբար) Հայ ենք, Զապէլ,  
պէտք է տոկանք:

**ԶԱՊԷԼ.** — Զպիտի մոռնամ այս անդին ծառայութիւնդ:

**ԶԱՐԵՀ.** — Քեզի հանդէս պարտականութիւնս  
միայն կատարեցի:

**ԶԱՊԷԼ.** — Ես ալ կընամ քու պատմութիւնդ լսել:

**ԶԱՐԵՀ.** — Ինչո՞ւ չէ՝ քանի որ բաղդակից ենք. —  
Անունս Զարեհ է: Ես մեր տունէն ծնողքիս եւ պզտիկ  
քրոջս հետ շղթայուած ելայ, եւ մեծ կաշառքով ա-  
զատուելով միացանք ահագին կալանաւորեալներու  
բանակի մը ու քշուեցանք բոլորովին անծանօթ հո-  
րիզոններ: Այս ընթացքով հազիւ տասը օրուայ ճամ-  
բայ առած էինք, հոն այրերը կիներէն զատելով՝ լաց  
ու կոծի մէջ կիները քշեցին դէպի անապատի խո-  
րերը: Եւ, այրերս կանխաւ պատրաստուած քիւրտ  
ու թուրք խումբի մը յանձնեցին, որոնք նախ մեզ  
նոյն իսկ մեր հագուստներէն մերկացնելէ ու կողոպ-  
տելէ վերջ՝ անխնայ աներեւակայելի խժդժութիւն-  
ներով ջարդեցին: Ես կ'զգամ վէրքս կողէս ստանալով  
դիակներու կոյտին մէջ մնացի, եւ արեւուն կիզիչ  
ճառագոյթին աղղեցութիւնէն մարեցայ: Ասկէ վերջ  
շատ բան չեմ յիշեր: Վերջապէս արեւուն անտանելի  
ջերմութեան դիշերուայ զով օդը յաջորդելով սթա-  
փեցայ, ու ինքզինքս դիակներու ճնշիչ ծանրու-  
թիւնէն ազատելով՝ պայծառ երկինքին տակ շարու-  
նակեցի իմ ընթացքս ամայի անապատին մէջ: Օրե-  
րով կենդանի արարած չտեսայ բացի անոնցմէ, ո-  
րոնք անվերջ ինկած էին ճամբուն կողքին: Կարելի  
չէր ատելութեամբ չեցուիլ մեր դահիճներուն հան-  
դէպ՝ ի տես հաչ մօր պատկերին, որ դիւցազնաբար  
ինկած էր վրէժի երգը իր շրթներուն սառած, եւ  
երախան ամրաբար փակած անոր կուրծքին՝ սեւ վր-  
բէժի վերջին կաթիլները կը ծծեր անյագաբար:

Շարաթ մը թափառելէ վերջ, ճամբուս վրայ բարի  
արարի մը հանդիպեցայ, որ զիս տունը տարաւ ու  
խնամեց: Զիս շատ կը սիրէին եւ ես փոխադարձա-  
րար: Շատ չանցած, սակայն, ժանտարմաները իմա-  
նալով հոն ապաստանիլս՝ եկան եւ զիս բոնագրաւե-  
լով կրկին անգամ տարին դէպի անապատ, ուր ինք-  
զինքս հազարաւոր հայերու մէջ գտայ, որոնք խիստ  
հսկողութեամբ ջարդելու կը տանէին: Անոնցմէ շա-  
տեր ինծի ծանօթներ էին, բայց, մարդու կերպա-  
րանքէ ելած ու ճանչնալը շատ դժուար էր: Ես չու-  
զելով ուրիշ խժդժութեան մը ականատես ըլլալ ու  
ենթարկուիլ «մահ» աղաղակելով փախուստ տուի:  
Շատեր սովոր էին ընել, բայց, քիչեր կրնային հա-  
րիւրներու գնդակներէն ազատուիլ: Զիս բաւա-  
կան հետապնդեցին եւ կ'երեւի հետքս կորսնցնելով  
վերադարձան: Հիմա մայրս եթէ կ'ապրի, գիտէ թէ  
մեռած եմ:

**ԶԱՊԻԼ.**— (Պատմութեան ընթացին տեղ տեղ կը  
ցնցուի) Ա՛հ, հերոս տղա՛յ, կեանքիղ հետ միասին  
իմ կեանքս ալ ազատեցիր:

Պահ մը իրարմէ հրապուրուած մեղմ ժպիտներով  
փոխն ի փոխ իրարու կը նային սիրոյ արտայայտու-  
թիւնը դէմքերնուն:

**ԶԱՐԵՀ.**— Ելիր, ասկէ հեռանանք, դուցէ մեղ  
հետապնդողներ կան:

**ԶԱՊԻԼ.**— Երթա՛նք... Երթա՛նք... շատ հեռու-  
ներ Երթա՛նք... Այն հարիզոնին վրայ հպարտ  
ցցուած լեռներէն ալ անդին Երթա՛նք... Հո՛ն, ուր  
ճիւաղներուն չարիքները մեզի չեն հասնիր, հո՛ն,  
ուր ա՛լ անոնց ձայները մեր ականջներուն հասնելով  
մեր կարօտի երդերուն ներդաշնակութիւնը չեն խան-  
դարեր: Երթանք... կենդանիներու պէս խոտ ճա-  
րակինք, օձերու պէս հող ուտենք եւ մայր բնութեան

մէջ ազատ ապրինք, ազատ շնչենք։ Երթա՛նք Զարբէ՛հ, Երթա՛նք. . .

Կը մեկնին իրարու օգնելով։

### Գ. ՏԵՍԱՐԱՆ

ՊԵՐՃՈՒՀԻ ԱՌԱՆՁԻՆ

Տեսարանն է այն մարդուն սենեակներէն մին, որուն Պերճուհի ծախուած էր ծափէրի կողմէ։

**ՊԵՐՃՈՒՀԻ. —** (Գլխիկոր ներս մտնելով) Կարծես ամէն ինչ կրակ է եւ կ'սպառնայ զիս վառել։ Նստած տեղս եւ անկողինս փուշեր են եւ կը խայթեն զիս։ Ամէն ի՛նչ օտար եւ անհանդուրժելի է։ Կ'ուզեմ երթալ եւ չարչարուիլ ցեղիս հետ. . . Մայրի՛կ. . . մայրի՛կ, անուշիկ մայրի՛կ, անապատի անվերջ տարածութեան վրայ՝ երբ ոտքերէս արիւն կը ժայթքեր, եւ արեւը գանկս կը խորովէր՝ յոզնած, խոնչած, անկարող թեւերուդ մէջ տաք համբոյրներդ կ'սփոփէին զիս։ Ծարաւութիւնէս աչքերս խաւարած եւ անօթութիւնէս աղիքներս գալարուած պահուն՝ ահեղ հարուածներու տակ, քու սիրովդ կը սնանէի. . . Մայրի՛կ, այն կեանքը ցանկալի է ինձ քան այս տունը։ (Դեպի դուռ քանի մը քայլ առնելով) Զպառկած աղօթեմ այս մօրս պատուէրն է։ (Ծնրադրած կ'աղօքէ, վերջացնելով) Ո՛վ Տէր, մօրս հոգին լուսաւորէ, եւ ինձ կամք ու համբերութիւն տուր, որ կարենամ տոկալ։ (Կը մեկնի)։

### Գ. ՏԵՍԱՐԱՆ

ՊԵՐՃ, ԳԵՂԱՄ ԵՒ ՎԱՀԵ

Տեսարանը կը պարզուի Պերճին ծննդավայրին մօտ լեռ մը։

Հեռուէն կը լսուի սրինգի ձայն մը եւ կենդանիներու մայիսներ:

Պերճ, Գեղամ եւ Վահէ զինուած ներս կը մտնեն:

**ՊԵՐՃ.** — (Հեռուն ցոյց տալով) **ԱՀԱԼԱՍԻԿ,** տեսէք այն բլրակին կողքին եղող տունը, այն մեր ամարանոցն է, եւ մեր հօտերը միշտ հոն կը պահէինք: Այն լեռը, որ կը տեսնէք մեր կենդանիներուն արօտավայրն էր, որուն սահմանը կ'երկարի մինչեւ մեր կեցած տեղը: Այդ բլուրին միւս կողմը կը տարածուի մեր քաղաքը, ուր հարուստ կալուածներ ունէինք:

**ԳԵՂԱՄ.** — **ՊԵՐՃ,** սքանչելի վայր մըն է, բայց, հայուն երգը իսպառ դադրած է: Այս ձայներն ու եղանակները, որոնք կը լսենք՝ բոլորն ալ թրքական են, բացի սրինգէն, որուն մեղեղին հայկական արձադանդ կուտայ:

**ՎԱՀԻ.** — (Դժգոհութեամբ) **Ա.ՅՍ** ժամանակէ ի վեր շիտակ լուր մը չկրցանք առնել: Այս աննպատակ կեանքէն, հարուստէն առնելով աղքատին տալէ՝ չե'մ դիտեր ի՞նչ օգուտ պիտի կրնանք հանել:

**ՊԵՐՃ.** — (Շուրջը նայելով) **ՊԱՀՈՒԾԻՆՔ,** մեր փնտուածն է որ կուղայ:

Կը պահուըտին:

## Ե. ՏԵՍԱՐԱՆ

### ՆՈՅՆՔ ԵՒ ԶԵՔԻ

**ԶԵՔԻ.** — (Սրինգ փչելով ներս կը մտնէ եւ ժարի մը վրայ նստելով կը շարունակէ նուագել նախերգութեան մէջի չորս տարի առաջուայ եղանակը) **Ո՛Հ,** հին օրեր, լման չորս տարի առաջ փչած էի այս եղանակը: Այն օրերը անդամ մըն ալ պիտի վերադառնան արդեօ՞ք:

**ՊԵՐՃ.** — (Զէֆիին դէմը տնկուելով) **ԵՐԵՔ ՄԱՐԻԷ**

ի վեր քեզի պէս տղայ մը կը մնտոէինք այս լեռները:

**ԶԵՔԻ.** — (Պերճին կերպարանին խիստ վախնալով) ի՞նչո՞ւ համար: Ի՞նչ պիտի ընէիք:

**ՊԵՐՃ.** — Մի՛ վախնար, բարեկամ, քեզ չպիտի շնասենք. մինակ քանի մը սլարդ լուրեր առնել կ'ուղենք:

**ԶԵՔԻ.** — (Ուժգին տնչառութեամբ սուր Պերճին նայելով) Դուն Պերճը չե՞ս. իմ տէրս չե՞ս:

**ՊԵՐՃ.** — Դուն Զէքին չե՞ս. մեր հովիւր:

**ԶԵՔԻ.** — (Փաքքուելով Պերճին) Այո՛, Պե՛րճ, ի՞նչ վիճակով կը տեսնեմ քեզ: Ո՞ւր ես այսպէս:

**ԳԵՂԱՄ.** — Պերճ, ո՞վ է այս սիրուն տղան:

**ՎԱՀԵ.** — Հա՞յ է:

**ՊԵՐՃ.** — Թէեւ թուրք ծնած է, բայց, մեր քով մեծցած ու մեր լեզուն սորված է: Այս տղան մեր հովիւն էր:

**ԶԵՔԻ.** — Պերճ, այն հին օրերը պիտի վերադառնա՞ն արդեօք:

**ՊԵՐՃ.** — Զէքի, այդ խնդիրներով չզբաղինք: Ի՞նչ գիտես մեր ընտանիքին մասին:

**ԶԵՔԻ.** — Պերճ, անոնց մասին ոեւէ մարդ բան չգիտեր բացի Աստուծմէ: Անոնք կորսուած սեպէ, բայց, կ'ուղեմ քեզի աղուոր լուր մը տալ: Երեք տարի է Ալիսը Մուհամմէտ պէյին քովն է, որ արիւն արցունք քամելով իր ազատութեան ժամուն կ'ըսպասէ: Ես լուր ունիմ բռնի կերպով վար դրաւ եւ հակառակ իր կամքին մինչեւ այսօր կը պահէ զինքը: Երանի՛ թէ ամիս մը առաջ քեզի տեսած ըլլայի, այն ժամանակ շա՛տ դիւրին էր Ալիսը ազատել: Այն անժամանակ զարդ էր ամիս այս ամրան ընթացքին ձեր պիտանը ճիշդ երեք ամիս այս ամրան ընթացքին՝ գոնէ ամարանոցը վայելեց Ալիսն ալ հետը բերելով՝ գոնէ այդ կերպով զինքը խարելու համար, բայց, ամէն ի՞նչ անօդուա, աղջիկը քաջարար կը պաշտպանէ

ինքզինք անոր դէմ: Պերճ, թէ որ այն ժամանակ կոնակս եղած ըլլայիր, այն գաղանը սպաննելով Ալիսը քեզի կը յանձնէի. հիմա շատ ուշ է, քաղաք փոխադրուած է արդէն: Պե՛րճ, չե՞ս ուզեր այն խեղճը ազատել, որ միշտ քեզ կ'երազէ, երբ ամէն մարդ կը խորհի թէ դուն մեռած ես:

**ՊԵՐՃ.**— (Պաղ արիւն կերպով) Ո՛չ, Զէքի, այդ բոլորը մոռցեր եմ:

**ԳԵՂԱՄ** եւ ՎԱՀԵ.— Պերճ, խենթացա՞ր:

**ՊԵՐՃ.**— (Տղոց աչքով նշան տալով) Ամէն ինչ մոռցեր եմ:

**ԶԵՔԻ.**— Պերճ, հայրդ տակաւին քաղաքէն չմեկնած այն մակարոյծը եկաւ եւ ձեր այս ընդարձակ ամարանոցը հօտերով միասին դրաւեց ու մինչեւ այսօր կը վայելէ եւ զիս ալ գերիի պէս կ'աշխացընէ: Ատոնք հոգս չեն, բայց, Ալիսին վիճակը չեմ կրնար տանիլ:

**ՊԵՐՃ.**— Զէքի, հոգ մի՛ ըներ, քեզմէ չնորհակալ եմ, գնա՛, եւ զիս տեսած մի՛ ըլլար երբէ՛ք:

**ԶԵՔԻ.**— Համբերէ, Պերճ, եղանակ մը փչելես վերջ պիտի երթամ: (Կը փչէ) Յիշէ՛ Պերճ, այս եղանակը փչեցի երբ Ալիսէն վերջին անգամ կը բաժնուէիր: Մոռցա՞ր այն արցունքները, որ աղջիկը կը թափէր քու ետեւդ: Բաւական չե՞ն այն արցունքները քեզի վրէժի մղելու:

**ՊԵՐՃ.**— (Թուղթ մը կը գրէ եւ Զէքիին տալով) Զէքի, քու անկեղծութեանդ վստահ եմ. գնա՛, եւ երբ պատեհութիւն ունենաս այս նամակը Ալիսին տուր:

**ԶԵՔԻ.**— Պերճ, նպատակս քեզմէ բաժնուիլ չէր, բայց, այս նամակին համար պիտի երթամ: Ինձ համար լաւ է քեզի հետ լեռները մնալ քան թէ այն գաղանին երեսը տեսնել:





## «ՀԱՅ ԿՈՅՍԻՆ ՊԱՅՔԱՐԸ»

---

Ըսէ՛, ով ծիծեռնակ, ինձ պէս կաւկանդուռդ մը  
ի՞նչպէս կրնայ սփոփանք գտնել: (Էջ 67)

**ՊԵՐՃ.** — Գնա՛ Զէքի, գնա՛ եւ գործդ շարունակէ:

**ԶԻՔԻ.** — Պիտի երթամ, ՊԵՐՃ, բայց աղջիկը մի մոռնար: (Կը քալէ դէպի դուռ) Տունն ու տեղը գիտես, հարկ չկայ քեզի ճամբայ սորվեցնելու: Գնա՛ անդամ մը եւ բաղդդ փորձէ: (Դրան մէջէն) բայց վստահ եղիր, այն ճիւաղը իմ ձեռքովս պիտի երթայ: (Կը մեկնի):

\* \* \*

**ՎԱՀԵ.** — Տեսա՞ք սա տղուն վրէժը, կ'ուզէ իր տէրը սպաննել:

**ՊԵՐՃ.** — Ահաւասիկ, մեզի պատուական գործ մը, կ'արժէ այս ճամբուն մէջ մեռնիլ:

**ՎԱՀԵ.** — Մահը ոչինչ է, ՊԵՐՃ, վստահ եղիր որ Ալիսը քոյրս է:

**ԳԵՂԱՄ.** — Այս տեսակ անիրաւութիւններն էին, որոնք առաջին անդամ զիս վրէժի ու ատելութեան մղեցին հանդէս այս ոճրագործ ցեղին: Մենք, երեքս միաբանութեամբ կարծեմ այն քաղաքը կրնանք քանդել իրենց գլխուն: Օ՛ն, ընկերներ, ժամանակ չվատնենք:

**ՎԱՀԵ.** — Վախնամ տղան իմացնելով մեր գործը դժուարացնէ:

**ՊԵՐՃ.** — Զէ՛, Վահէ, ես տղուն բարեկամութեան վստահ եմ, այն բոլորովին հայ սնած՝ հայ մեծցած է:

**ԳԵՂԱՄ.** — Աննպատակ կեանքը արժէք չունի: Յիշեցէ՛ք, անցեալ երեք տարւայ ընթացքին քանի քանի անդամներ ծանր շղթաներու անարդանքին ու ժանդ սուրերու սպառնալիքին ենթարկուած ու աղատուած ենք: Այս անդամ ալ պարտաւոր ենք՝ կամաւոր կերպով ամէն վտանգ յանձն առնել, որ նպատակնիս բարի է. եւ վստահ եմ բաղդն ալ պիտի օղնէ մեզ:

**ՎԱՀԵ.** — ՊԵՐՃ, այս վայրկեանէն սկսեալ քու կողքիդ մեր պարտականութեան վրայ ենք:

**ՊԵՐՃ.** — Կ'ուզեմ ձեզ հետ մեռնիլ, բայց, մահէս առաջ կը փափաքիմ այն գաղանին տապալումը տեսնել:

**ԲՈԼԱՐԸ.** — 0'ն, ուրեմն... (Կը մեկնին):

### Զ. ՏԵՍԱՐԱՆ

ԱԼԻՍ ԱՌԱՆՉԻՆ

Տեսարանը կը ներկայացնէ Մուհամմէտին գաղտնի սենեակներէն մին:

**ԱԼԻՍ.** — (Թախիծն դէմքին ներս կը մտնէ եւ պատուհանէն դուրս նայելով կ'երգէ):

Իրիկուայ զեփիւռ փըչէ մեղմիկ,  
Բեր ինձ թռչնոց երդն անուշիկ.  
Ղուրպան ձայնիդ, զեփիւռ հայրենի,  
Հսէ՛ ինձ, հայուն արեւը պիտ' ծագի՞:  
(Առաջ գալով):

Հալածական, լքուած եւ անտէր  
Հայ ազգը, ո'վ Տէր դուն մի տանջեր.  
Անոր պայքարն է ըլլալ ազատ  
Հայրենիքով ու կրօնքով զատ զատ:  
(Պատուհան երթալով):

Ո'վ ծիծեռնակ, ցաւ ունիմ ահեղ,  
Զիս մի՛ տանջեր՝ քովս եկուր մի հեղ,  
Հարցում ունիմ, հարցում ցաւագին...  
Խնդրեմ ըսէ, ո՞ւր է իմ պաշտելին:

(Սեղանին մօտ գալով կուրծքէն պատկեր մը կը հանէ եւ լուռ պահ մը անոր նայելով սեղանին վրայ կը ճգէ եւ պատուհան վերադառնալով): **ԱՀԱՒԱՍԻԿ,** արեւ մը եւս իր ճառագայթները կը սքողէ բարձր լեռներուն ծոցին, հրճուեցնելով մայր բնութիւնը ուրիշ

արեւու մը յոյսով։ Եւ դու, ո՛վ սիրուն ծիծեռնակ, քաշուած այդ ծակին մէջ կը հանդչիս առտուն լոյսին հետ՝ քու ճկուն թեւերուդ թափ տալու դէպի անապատ։ Ցուրտէն այդչափ մի սոսկար. գիտե՞ս, սեւ ձմեռը մշտատեւ է սրտիս մէջ. անոր փոթորկալից կատաղի ամպրոպները կը սարսեցնեն ամբողջ էութիւնս, բայց, նա կը գոտեպնդէ զիս նոր գարունի մը հեռանկարով։ Մի՛ աճապարիր այդչափ, տակաւին մեր լեռները ճերմակներու մէջ թաղուած չեն։ Օր մը, միայն օր մը աւելի հիւր մնացիր քովս, որ կարենամ բոլոր կարօտներս ու համբոյրներս տալ քեզի՝ անապատէն անցած պահուդ զանոնք փոխանցելու համար ցեղիս անթիւ ու անթաղ աճիւններուն։ (Քիչ մը կանգ կ'առնեկ։) Եւ վերջապէս զնա, ո՛վ ծիծեռնակ, զնա՛, անարգել զնա՛, ու կեանքը վայելէ, քանզի ինձ պէս բանտարկուած չես առանց դատապարտութեան։ (Պահ մը լուռ) Հոս, այս դժոխքին մէջ արեւը իր փայլը եւ բնութիւնը իր վայելքը կը կորսնցնէ։ Կ'ուզեմ քեզ պէս զոյգ մը թեւեր ունենալ եւ թռչիւ այս զուլում աշխարհէն հեռու... քեզմէ ալ հեռու եւ զտնել այն, որուն կարօտով կը տոչորուիմ։ Բսէ՛, ով ծիծեռնակ, ինձ պէս կաշկանդուող մը ի՞նչպէս կընայ սփոփանք զտնել։

**ԶԵՔԻ.** — (Այս մենախօսութեան պահուն նամակը ձեռքին պատերուն տակէն սողսկելով Ալիսին ետեւ կանգ կ'առնեկ, եւ չուզելով անոր խօսակցութիւնը ընդհատել, անկեղծ վիշտը դէմքին վերադառնալով նամակը սեղանին վրայ պատկերին բով ճգելով նոյն կերպով դուրս կ'ելլէ)։

**ԱԼԻՍ.** — (Սեղանին վրայ գալով պատկերը ձեռքին սարսուռ մը կ'ունենայ) Ո՛հ, կը դողամ... սիրտս ամուր կը զարնէ... աչքերս կը խաւարին... ծունկերս թուլցած են... դլուխս կը շրջի... (Ցանկարծ սեղանին վրայ ճգուած նամակը տեսնելով՝

պատկերը կը ձգէ եւ նամակը խլելով պատուհանին առջեւ կը վազէ, բայց Մուհամմէտին ներս մտնելը նշմարելով, հազիւ ժամանակ կ'ունենայ զայն իր ծոցը պահելու) :

### Է. ՏԵՍԱՐԱՆ

#### ՆՈՅՆ ԵՒ ՄՈՒՀԱՄՄԵՏ

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.**— (Զէնիք մէկ կողմ դնելով) **ԴԵՌ** կ'ուղես որ սպասե՞մ:

**ԱԼԻՍ.**— (Անձայն պատուհանէն դուրս կը դիտէ) :

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.**— **Շո՛ւտ,** պատմէ՛, թէ ի՞նչ է դաղափարդ:

**ԱԼԻՍ.**— Գաղափարս քեզի պատմելու հարկ չեմ տեսներ. կորսուիր ասկից: (Բարկացոտ) **Եւ,** սպասէ մինչեւ որ ճաթիս:

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.**— (Կատաղի ժպիտով մը) **ԶԵ՞Ռ** գիտեր, թէ քեզի կը սիրեմ:

**ԱԼԻՍ.**— **Մի՛** ժպտիր երեսիս, գիտեմ ատիկա թոյն է ինծի համար:

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.**— կը սիրեմ քեզ...

**ԱԼԻՍ.**— կ'ատեմ քեզ...

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.**— **Սիրտդ** կ'ուղեմ մինակ... որ իմն է:

**ԱԼԻՍ.**— **Սիրտս** ատելութեան հուր մըն է, որ պիտի այրէ քեզ...

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.**— **ԶԵ՞Ռ** գիտեր, թէ այդ է վախճանդ: (Կ'ուզէ գրկել) :

**ԱԼԻՍ.**— (Ետ ետ քառուելով) **ՀԵՌՈ՛Լ,** ՀԵՌՈՒ ինձմէ, չե՞մ ուղեր որ պիղծ ձեռքերդ կոյս մարմնոյս դպչին: Ո՛չ, փուշեր են ատոնք:

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.**— Անձնատութիւն կը պահանգեմ:

**ԱԼԻՍ.** — Անձնատութիւն գոյութիւն չունի բառարանիս մէջ։ Հայ մը թուրքի մը չի կընար յանձնուիլ։

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.** — Այդ ի՞նչ ցնորք է։ քեզի ազատեցի անապատի տանջանքներէն, անոր մատնուողները իսպառ կորան, մինչ դուն երջանիկ կ'ապրիս այս պալատի պէս տանս մէջ։ Պարզապէս կը դթամ քեզի։

**ԱԼԻՍ.** — Արդեօք ինչո՞ւ կը դթաս։ Միթէ՞ ես անոնց ցեղէն չեմ, որոնց աճիւնները անապատի ամէն կողմէն վրէժ կ'աղաղակէն։ Վստահ եղի՛ր, ո՛վ գաղան, թէ որ երկրագնդիս վրայ շնչող հայ մը իսկ չը մնայ՝ իր արդար վրէժը լուծելու համար, անապատի այն անթիւ աճիւնները յարութիւն առնելով՝ արդէն կոյր աչքերդ պիտի փորեն իրենց դալկահար եղունգներով։

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.** — (Բարկութեամբ դէպի սեղանին վրայ գալով) Օ, գլխու ցաւ կը պատճառես քու անվերջ յիմարութեամբ։ (Հեգնական) Զոր ոսկորները դալով աչքս պիտի փորեն եւ դուն տեսնես։ Սպասէ որ այդ օրը դայ։ (Յանկարծ սեղանին վրայ մոռցուած Պերնին լուսանկարը տեսնելով) Այս որո՞ւն պատկերն է, որ հոս պահուած է։ Այս շատոնց մեռած է։

**ԱԼԻՍ.** — Այն չմեռնիր քանի ես չեմ մեռած...  
Այն պիտի ապրի սրտիս մէջ քանի ես կը շնչեմ։

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.** — (Պատկերը կտոր կտոր ընելով) Եւ կ'սպասե՞ս, որ դայ եւ քեզ ձեռքէս ազատէ։

**ԱԼԻՍ.** — Այո՛, անոր վրէժը պիտի լափէ քու մարմինդ։

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.** — (Յարձակելով) Եւ ես կ'ուզեմ քու մարմինդ լափել։ Ա՛լ քու պէտքութիւնդ չեմ զգար։

**ԱԼԻՍ.** — (Պատպանողական վիճակով) Պատրաստ եմ արժանավայել կերպով մղել վերջին պայ-

քարս։ ՏԵ՛ս թէ հայ աղջիկ մը ինչպէ՛ս պիտի կռուի իր թշնամւոյն դէմ։ (Բոռւնցքը ցոյց տալով) Պիտի ջախջախեմ անիծեալ գանկդ։

Այս խօսքին հետ միասին Պերճին դէմքը կը նըւմարուի պատուհանէն, դուրս մութին մէջ։

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.**— (Զէնքը ձեռքին) Ա՛լ չեմ կրնար երկար սպասել։ Պէ՛տք է ինդիրը վերջանայ այս իրիկուն, երկուքին մէկը՝ մահ կամ անձնատութիւն։

Պերճ դուրսը սոսկալի ցնցում մը կ'ունենայ։

**ԱԼԻՍ.**— (Ուժգին տնչառութեամբ) Գուցէ մահ, իսկ երբէ՛ք անձնատութիւն։

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.**— Պարզէ՛, ի՞նչ ըսել կ'ուզես։

**ԱԼԻՍ.**— Ճիշդ այն, ինչ որ ըսի։

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.**— (Ատրճանակը Ալիսին կուրծֆին դնելով) Արտասասնէ՛ վերջին խօսքդ։

**ԱԼԻՍ.**— (Ճարահատ աչքերը դէպի երկինք սեւոելով) Ատելութիւն եւ մա՛հ…

Վերջին խօսքը չարտասանուած Գեղամ եւ Վահէ դրան մէջ, իսկ Պերճ Մուհամմէտին ետեւ պատրաստ են։

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.**— Ա՛ռ, ուրեմն։ (Կրակած պահուն Պերճին հարուածը ստանալով զէնքը օդին մէջ կը պայթի) :

### Ը. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆՔ, ՊԵՐՃ, ԳԵՂԱՄ ԵՒ ՎԱՀԷ

**ԱԼԻՍ.**— Ով հերոս, չեմ գիտեր թէ ով ես. բայց արդարասէր մէկ մը եղած ըլլալու ես անպատճառ։

**ՊԵՐՃ.**— (Մուհամմէտին ատրճանակը յափրտակած մէկ կողմ նետելով) Գաղտնիք չըլլայ։ (Թեւը սոքքելով) Այս Պերճն է, որուն սուրին տակն էիր շարաթէ մը ի վեր։

**ԱԼԻՍ.** — (Պերճին նայելով) *Երա՞զ արդեօք...*

**ՊԵՐՃ.** — (Վրէժխնդրաբար) *Զշջա՛ ոճիրներուդ  
վրայ, քանի գլուխդ մարմնէդ զատուած չէ:*

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.** — (Դառնյնը քաշելով) *Հեռացի՛ր  
ասկից քանի կատղած չեմ:*

Գեղամ եւ վահէ օգնութեան կը փութան:

**ԱԼԻՍ.** — (Թուրքին զէնիքը գետնէն կը խլէ ու  
անոր ուղղելով) *Անշա՛րժ... անձնատութիւն...*

**ՊԵՐՃ.** — (Ինֆղինի պատպանելով) *Այս կռիւը  
ինծի կը պատկանի, դուք դուռը սլահեցէք միայն,  
եւ մահէս վերջ շարունակեցէք պայքարս:*

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.** — *Օդնութիւն... օդնութիւն...*

Դուրսէն աղմուկներ կը լսուին:

**ԳԵՂԱՄ.** — (Դրան մէջէն) *Պերճ, շարժի՛ր, ամ-  
բողջ տնեցիք լսեցին:*

Կռիւը կատաղաբար կը ժարունակուի փոխն ի փոխ  
մէկուն կամ միւսին յաջողութեամբ:

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.** — *Օդնութիւն... օդնութիւն...*

Դուրսէն ամբոխային աղաղակներ եւ տեղատա-  
րափ հրացանի ձայներ կը լսուին:

Գեղամ, վահէ եւ Ալիս քաջաբար կը պատպանեն  
դուռը սաստիկ կրակին պատախանելով փոխադար-  
ձաբար:

**ՎԱՀԵ.** — *Պերճ, վերջացուր, այս մեր վերջին  
սլատեհութիւնն է: Ամբողջ քաղաքը մեր վրայ դար-  
ձաւ:*

**ՄՈՒՀԱՄՄԵԼՏ.** — (Դառնյնով Պերճին վրայ յար-  
ձակելով) *Աղիքներդ դուրս պիտի թափեմ:*

**ՊԵՐՃ.** — (Ճարպիկ նկունութեամբ մը կը պլուի  
Մուհամմէտին դառնյնը բռնած ձեռքին, ու ոլորու-  
մով մը գետին կը ձգէ զայն եւ կուրծքին վրայ կը  
նստի: Դառնյնը տակաւին թուրքին ձեռքին մէջ անոր  
դաստակէն կը բռնէ, եւ դառնյնը քշնամւոյն կոկոր-

դին դնելով) ԶՂՂՄ', շուտ զՂՂՄ' ոճրապատ արարք-ներուդ վրայ... .

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.**— (Սարսափահար) Օգնութի՛ւն... .  
օգնութի՛ւն... .

**ՊԵՐՃ.**— (Անոր դառյանը իր ձեռքէն խլելով մէկ կողմ կը նետէ) Քու պիղծ արիւնդ թափելով ձեռքս եւ գետինը չպիտի աղտոտեմ: Պէտք է այն արիւնը, որ ծծեցիր ցեղէս մոխրացնէ կեղտոտ սատակդ ներսէդ: (Բոլոր ոյժով կը նաևկէ անոր կոկորդը, ու պահ մը այնպէս կը մնայ՝ ատելութեան քոյնը քափելով անոր գլխուն) : Լճան կեանքը ապրած եմ... .

Մուհամմէտ անշարժ կը մնայ գետին տարածուած:

**ԱԼԻՍ.**— (Պերճին) Ղուրպան այդ պողպատ բազուկներուդ: (Պերճը կը ժաշէ քուրքին վրայէն) :

Չորսը միասին հակառակ կողմէն խոյս կուտան ժաջաբար պատպանուելով սոսկալի կրակին դէմ:

### Թ. ՏԵՍԱՐԱՆ

#### ՆՈՅՆ ԵՒ ԶԵՔԻ

Տեսարանը պահ մը անշարժ կը մնայ բացի դուրսի կրակին:

**ԶԵՔԻ.**— (Արագ ներս վազելով) Այս ի՛նչ է որ ամբողջ քաղաքը ոտքի վրայ է: Այս ի՛նչ ահեղ կոիւ է որ կը մղուի գեշերուայ այս ժամուն: Կարծես հըսկայ բանակներ ճակատած են. (կատակերգական) արդեօ՞ք անգլիական բանակը հասաւ: (Շուրջը նայելով) Այս ո՞վ է որ հոս փոռուած է: (Մուհամմէտին գլուխը կը տարժէ) :

**ՄՈՒՀԱՄՄԵՏ.**— (Սքափելով) Ո՞ւր է սուրս.  
ո՞ւր է զէնքս: Օգնէ որ ելլեմ:

**ԶԵՔԻ.**— (Կ'օգնէ) Ի՞նչ է պատահեր, պէտ: Հոս եկող եղա՞ւ:

**ՄՈՒՀԱՄՄԵՏԾ.** — (Հազիւ կարենալով ինֆղինք ոտքի պահել) **Այո...** **Աչքերս կը խաւարին.** պիտի մեռնիմ, **Զէքի:**

**Զէքի.** — **Իրա՞ւ պիտի մեռնիս:** (Անոր մարմինը ուղիղ պահել ջանալով) **Խնդրեմ այդչափ չուտ մի մեռնիր,** **ըսելիք ունիմ:** (Ետ քայլ մը կ'առնէ եւ ձեռքին թքնելով) **Իմ կողմէս այս ալ հետդ ա՛ռ ուրեմն:** (Ուժգին հարուածով մը կը փռէ զայն գետին) : Հատ մը եւս կ'ուղե՞ս: (Ոտքի հարուած մը եւս տալով կը քալէ դէպի դուռ) : **Լճան կեանքը ապրած եմ...**

**ՄՈՒՀԱՄՄԵՏԾ.** — (Կ'իյնայ կը մեռնի) :

**Զէքի.** — (Դրան մէջէն) **Ես Պերճին ըսի՝ թէ իմ ձեռքովս պիտի սատկի այն ճիւաղը:**

Վարագոյրը կ'իջնէ:

[ ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ  
ԱՐԱՐՈՒԱԾԻՆ ]

**ԾԱՆ.** — Նախընթաց էջերուն մէջի տեսարաններէն ոմանք որչա՞փ որ ալ դառն են՝ ցեղովին ենթարկուեցանք, որով այն պատկերները տեսնել քող չսոսկացնէ մեզ. այլ իբրեւ անտէջ կայծեր քող գրգռէ մեր վրէժի ու ատելութեան քոցը մեր ազատութեան պայֆարը կարենալ շարունակելու համար:

Ե. Ա. Ք.



## ԶՈՐՌՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Ա. ՏԵՍԱՐԱՆ

ԶԱՐԵՀ ԵՒ ԶԱՊԵԼ

**S**ԵՍԱՐԱՆԸ կը ներկայացնէ զինադադարէն վերջ Սիւրիական ժաղաքի մը մէջ հայկական ժէմփի մը տրջափակը. դուռներուն վրայ կախուած են. «Բէմփ», «Որբանց» եւ «Հիւանդանց» նշանատախտակները:

Զարեհ եւ Զապէլ սեղանի մը վրայ նստած լուռ թերթ կը կարդան:

**ԶԱՐԵՀ.** — (Լոռութիւնը խզելով) Զապէ՛լ, տես սա թերթը ի՛նչ սքանչելի լուրերու վրայ կը խօսի: Դեռ մինչեւ երէկ՝ Երբ մահուան սպառնալիքին տակ արիւն արցունք քամելով օրէ օր կը հիւծէինք, կը ռնալի՞նք այսչափ շուտ Աղատ Հայաստան, Հայ Դրօշակ, Հայ Դահլիճ եւ Հայ Բանակ երազել:

**ԶԱՊԵԼ.** — Այո՛, Զարեհ, կը յուսայինք՝ բայց այսչափ շուտ երեւակայել դժուար էր: Այդ պահուն մեր դատը իր երկունքի շրջանն էր որ կը բռլորէր, եւ մենք անձերնիս ուրանալով ատելութեան ու վրէժի հուրով զինուած՝ անվարան նետուեցանք ովայքարին մէջ կոռւելու համար՝ բռնակալներու ճնշիչ լուծին դէմ, եւ յաջողեցանք մեր «նպատակին գէթ մի մասը կատարել»: Այսօր՝ մեր նախնեաց երազներն են, ո-

րոնք իրականութեան վոխուած ու մենք աղատութեան արշալոյսին հետ մեր սիրելի Դրօշակը կ'ողջունենք ալեւոր Մասեաց կողքին:

**ԶԱՐԵՀ.** — Կը յուսամ սարսափ ու հալածանքներուն վերջակէտը դրինք մեր արեան կաթիլներով: Բայց, իբրեւ աղատ պետութիւն իրական կոռուին ճիշդ նոր պիտի սկսինք, մեր այնքան արեան դինը՝ եւ ամենուս սիրելի ու թանկանգին դրօշակը յաւիտեանս յաւիտենից չծալելու՝ եւ անոր հովանիին տակ զարդանալու եւ յառաջդիմելու համար: Մինչեւ այսօր մեր սլայքարը աղատութեան սիրոյն էր, իսկ ասկէ վերջ մեր Դրօշակին պահպանման համար պիտի լինի:

**ԶԱՊԻԼ.** — Զկայ այնքան վսեմ մահ՝ որքան աղատութեան սիրոյն, եւ չկայ այնքան ցանկալի մահ՝ որքան դրօշակին պաշտպանման համար . . .

**ԶԱՐԵՀ.** — Այդ բացարձակ իրողութիւն մըն է, բայց այս բառերէն անմիջապէս վերջ աչքիս կը ցըցուին սա «կը փնտուի»ներու շարքը: Մէկը իր քոյրը, միւսը իր եղբայրը, երրորդ մը իր կինն ու դաւակները, ուրիշ մը իր բարեկամներն ու ծանօթները եւ այսպէս անվերջ մէկը միւսը կը փնտոէ:

**ԶԱՊԻԼ.** — (Ժպտելով) Զարեհ', մենք զմեզ փնտողներ չունինք, բայց գիտե՞ս . . .

**ԶԱՐԵՀ.** — (Լուռ կը կարդայ):

**ԶԱՊԻԼ.** — Գիտե՞ս, Զարեհ:

**ԶԱՐԵՀ.** — Ի՞նչ կը հարցնես, Զապէլ:

**ԶԱՊԻԼ.** — Գիտե՞ս, քանի մը օրէն Ծնունդը պիտի տօնենք:

**ԶԱՐԵՀ.** — Այո՛, չորս տարիէ ի վեր առաջին անգամ ըլլալով՝ հայրենի սովորութեամբ ծնունդ մը պիտի վայելենք: Խորհիր անգամ մը ամէն ինչ պատուաւոր կերպով պատմութեան լանձնեցինք, եւ անցեալ չորս տարին մեզի պարծանք մըն է: Յաջորդ սերունդները հոլարտ պիտի ըլլան մեղմով՝ ի՞նչպէս

մենք կը սիրենք ու յիշատակնին կը պատուենք մեզի աղատութեան ոգին ներշնչողներուն:

**ԶԱՊԵԼ.** — (Նազով) Եւ միւսն ալ գիտե՞ս:

**ԶԱՐԵՀ.** — (Խնդալով) Հիմա հասկցայ ըսելիքդ: Զապէլ, այդ այնպէս տեղ մը որոշած էինք, որ անմոռանալի է:

**ԶԱՊԵԼ.** — Ծնունդէն քանի՞ օր վերջ:

**ԶԱՐԵՀ.** — Խաղաղ տեղ մը երթանք, եւ մեր օրը որոշենք:

Կը մեկնին ուրախ զուարք:

### Բ. ՏԵՍԱՐՄԱՆ

ՀԱՅՐԻԿ, ՊԵՐՃՈՒՀԻ, ԶԱՐԵՀ ԵՒ ԶԱՊԵԼ

Հայրիկ ներս մտնելով որբանցին դրան առջեւ կը նստի:

**ՊԵՐՃՈՒՀԻ.** — (Ներս վազելով) Հայրի'կ, եղբօրս եւ Զապէլին հետ, Կաղանդի եւ Ծնունդի վրայ այնքա՞ն հաճելի ժամանակ անցուցի, որ չեմ կրնար բացատրել:

**ՀԱՅՐԻԿ.** — Ուրախ եմ աղջիկս:

**ՊԵՐՃՈՒՀԻ.** — Եւ միասին եկեղեցի ու լսարան դացինք: Հայոց մէջ ամէն տեղ խրախճանք կը տիրէ:

(Հայրիկին ականջին կամաց քաներ մը փսփսալով դուրս կ'ելլէ):

**ՀԱՅՐԻԿ.** — (Պերճուհիին ետեւէն նայելով) Սքանչելի' լուր մըն էր, որ տուաւ ինձի: (Պարելու շարժումներ ընելով) Զորս տարիէ ի վեր առաջին պատեհութիւնն է, որ կը ներկայանայ պարելու համար Զարեհին հարսնիքին: (Ետ դառնալով Զարեհին ու Զապէլը ետեւը տնկուած կը տեսնէ, որոնք կը խնդան ի տես իր ուրախութեան. Զարեհ զինուած ու նամբորդի հազուստով է) Որո՞նք են ասոնք: (Զարե-

հին ձեռքերը խլելով) Կը շնորհաւորեմ, Զարե՛հ, Ե՞րբ  
կ'ամուսնանաք:

**ԶԱՐԵՀ.**— Հայրիկ, որոշած էինք ոեւէ ժամանակ  
ամուսնանալ, բայց, անակնկալ ճամբորդութեան մը  
հետեւանքով՝ անորոշ ժամանակի մը համար յետա-  
ձըդեցինք:

**ՀԱՅՐԻԿ.**— Անշուշտ ձեր օդտին համար այդպէս  
կարդաղեցիք:

**ՊԵՐՃՈՒՀԻՀԻ.**— (Ներս մտնելով) Եղբայր, այդ  
ի՞նչ կերպարանք է:

**ԶԱՐԵՀ.**— (Փոյրը գրկելով) Պերճուհի, կ'եր-  
թամ որ Ալիսը ազատեմ:

**ՊԵՐՃՈՒՀԻՀԻ.**— (Ուրախութեամբ) Շա՛տ աղէկ,  
եղբայր:

**ՀԱՅՐԻԿ.**— Պատմութիւն մը, որ անցեալ օր  
սլատմեցիր, այն Ալի՛սն է, որ կ'երթաս ազատելու:

**ԶԱՐԵՀ.**— Այո, Հայրիկ, խիզճս չիներեր որ ու-  
րախ զուարթ ամուսնանամ, քանի այն աղջիկը գերի  
է, եւ իր դահիճը կ'ապրի:

**ՀԱՅՐԻԿ.**— Տղաս, այդ խիստ արկածալից ձեռ-  
նարկ մըն է, որուն սկսած ես, քանի՛ ընկեր ունիս  
քեզի հետ:

**ԶԱՐԵՀ.**— (Ատրճանակը ցոյց տալով) Այս բա-  
ւական է իբրեւ ընկեր՝ Արարչին օգնութեամբ:

**ՀԱՅՐԻԿ.**— Յաջողութիւն կը մաղթեմ, տղաս:



## Գ. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆՔ, ՊԵՐՃ, ԱԼԻՍ, ԳԵՂԱՄ ԵՒ ՎԱՀԵ

Պերճ, Ալիս, Գեղամ եւ Վահե նամբորդի հա-  
գուստներով ներս կը մտնեն:

**ՊԵՐՃ.**— (Նշանատախտակները կը կարդայ)  
«Քէմփ», «Որբանոց», «Հիւանդանոց»: **ԶՈՐԱ** տարիէ

ի վեր առաջին անգամ ըլլալով Հայկական միջավայր մըն ենք:

ԳԵՂԱՄ. — Այո՛, չէ՞ք տեսներ՝ ամէն ինչ Հայկական գոյն ունի:

Զարեհ, Զապէլ եւ Պերճուհի անկիւն մը բաշուելով իրարու հետ կամաց կը խօսակցին:

ԱԼԻՄ. — Այս ի՞նչ սքանչելի տեսարան է:

ՎԱՀԵ. — Սա մարդէն հաստատ լուր մը առնենք, թէ ո՛ւր ենք:

ՊԵՐՃ. — (Հայրիկին մօտենալով) Բարե՛ւ, պարո՞ն, դուք հա՞յ էք:

ՀԱՅՐԻԿ. — Բարեւ, աղբեր ջան. Ես հայ եմ եւ որբանոցին ալ հայրիկը: Բսելիք մը ունի՞ք:

ԳԵՂԱՄ. — Ղուրպան ձայնիդ, հայրիկ. չորս տարիէ ի վեր առաջին անգամ ազատ աշխարհի մէջ հայ մը տեսանք:

ՀԱՅՐԻԿ. — Զարմանալի բան, ի՞նչ պատահած է ձեզ: Չէ՞ք գիտեր որ Մահիկը տեղի տուած է Ազատ Դրօշակներու, եւ վերապրող հայութիւնը դունդադունդ ամէն կողմէ կը դիմէ այդ դրօշակներուն հովանիին տակ:

ՎԱՀԵ. — Հայրիկ, այս ուրախ լուրերը մեղի համար նորութիւններ են: Բայց, երեւոյթներէն դատելով իրողութիւնը դուշակել շատ դիւրին է:

ՀԱՅՐԻԿ. — Տղաս, պատմեցէ՛ք տեսնեմ, ի՞նչ է պատահէր ձեզի:

ՊԵՐՃ. — Ատիկա ուրիշ յարմար առիթով մը կը պատմենք քեզի: Հիմա կը փափաքինք մեր կորսուող ըիտանիքներուն հետքը դտնել եւ կ'ուզենք գիտնալ թէ անոնցմէ ապրողներ կա՞ն թէ ոչ: Այս նպատակին համար կրնա՞ս մեղի միջոց մը ցոյց տալ:

ԶԱՐԵՀ. — (Իրեններուն) Մեղի ալ այդպէս փնտող մը կ'ըլլայ արդեօ՞ք:

ՀԱՅՐԻԿ. — (Զարեհին ակնարկելով) Ահաւասիկ

Հերոս մը, որ իր եղբօրը սիրոյն ինքզինքը մահուան գիրկը կը նետէ: Ներկայիս շատ դժուար է ոեւէ կորսուող գտնել, եթէ ինք զքեզ չգտնէ: Բայց, ներսը տնօրէնութեան տոմարին մէջ այս քաղաքին եւ շըրջակայից հայութեան անունները արձանագրուած են, եւ ատկէ իմանալ շատ դիւրին է եթէ հոս են:

**ԳԵՂԱՄ.** — Պերճ, մեր ուզած տեղն ենք եկած անդիտակցաբար: Ներս գրասենեակը երթանք եւ նոր ծանօթութիւններ առնենք:

**ՊԵՐՃ.** — (Զարեհին ակնարկելով) Գեղամ, շատ շահագրգուած եմ սա խօսակցութիւնէն: Դուք գացէք եւ ես Ալիսին հետ կը հետեւիմ ձեզի:

**ՎԱՀԵ.** — Աճապարինք ուրեմն:

Գեղամ եւ Վահէ Հայրիկին առաջնորդութեամբ Քէմփի կը մտնեն: Պերճ եւ Ալիս լարուած ուշադրութեամբ մտիկ կ'ընեն միւսներուն խօսակցութիւնը:

### Դ. ՏԵՍԱՐԱՆ

ԶԱՐԵՀ, ԶԱՊԵԼ, ՊԵՐՃՈՒՀԻ, ՊԵՐՃ ԵՒ ԱԼԻՍ

**ԶԱՐԵՀ.** — Այո, Զապէլ, դառն է ինձ համար անոր գերութիւնը յիշել: Այն ճակատագրական իրիկունը արտասունքով տեսայ խեղճ աղջկան հերոսական մաքառումը՝ ճիւաղին լարուած ատրճանակին եւ մերկացած սուրին դէմ: Հայ կոյսի մը այն ահեղ պայքարը ինձ կոռւիլ եւ զոհուիլ սորվեցուց: Քանի երեւակայեմ այն տեսարանը, որ մեր պատմութեան փառքերէն է, չեմ կրնար ատելութեամբ ու վրէժով չլեցուիլ:

Պերճ եւ Ալիս հետաքրքրաբար անոնց կը մօտենան:

**ԱԼԻՍ.** — (Պերճին) Շատ քաղղակիցներ ունիմ եղեր:

**ՊԵՐՃՈՒՀԻ.** — Եղբայր, ի՞նչ ողբերգական գիշեր

մըն էր ան, երբէ՛ք չեմ մոռնար: Դաշոյնդ մերկացուցած վազեցիր այն գազանին աղիքները թափելով աղջիկը ազատելու, բայց ոստիկանը վրայ հասնելով քեզ կապեց եւ բոլորս ալ դուրս քշեց:

**ԶԱՐԵՀ.**— Պերճուհի, մոռցիր այն սեւ գիշերը, եւ յոյսով սպասէ անոր ազատութեան ժամուն:

**ԶԱՊԻԼ.**— Այո՛, սիրելիս, կ'զգամ թէ որչա՛փ դառն է այն բաղդին մատնուիլ: Ա՛լ բաւական է մեր թափած արիւնն ու արցունքը: Մեր պարտականութիւնն է անոնց արցունքները սրբել եւ վիշտերնին ամոքել: Ի՞նչ կ'արժէ ազատութիւնը երբ նա գերութեան մէջ կը հիւծէ:

**ԶԱՐԵՀ.**— (Խոռվ) Թո՛ղ խորտակուին գերութեան շղթաները:

**ՊԵՐՃՈՒՀԻ.**— Եղբայր, անպիտանը Մէմմէտը պիտի սպաննես թէ ոչ:

**ԶԱՐԵՀ.**— Այո՛, քոյր, անոր համար զինուած եւ անոր համար թեւերս սոթթած եմ, միեւնոյն ժամանակ ուխտելով՝ թէ զինաթափ չպիտի ըլլամ ու թեւերս վար չպիտի առնեմ, քանի նա գերի է ու մեր թշնամին կ'ապրի:

**ՊԵՐՃՈՒՀԻ.**— (Վեր ցատքելով ուրախութիւն ցոյց կուտայ) :

**ՊԵՐՃ.**— Կը զարմանամ աս երիտասարդին քաջութեան:

**ԶԱՊԻԼ.**— Հպարտ եմ, որ այդ հերոս սրտիդտիրացած եմ: Ա՛հ, երանի թէ ես ալ քեզի ընկերակցէի:

**ԶԱՐԵՀ.**— Զապէլ, կը սիրեմ նա՛ որչափ քեզ եւ այս պզտիկ քոյրս, քանզի այն պարզ մէկ մը չէ՛ այլ եղբօրս մինակ յիշատակը եւ մինակ սիրած աղջիկը: Անիկա ինծի համար խիստ թանկագին է: (Վրէժխընդրաբար) Ա՛լ չպիտի հանդուժեմ անոր գերութեան մէջ կ'առաջ անոր գերութեան մէջ կ'առաջ:



Նկար Լ. ԵԱԳՈՒՊԵԱՆԻ  
«ՎՐԵԺԻ ԵՒ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՊՈՌԹԿՈՒՄԸ»

---

Ատելութեան եւ Վրեժի Հուրով զինուած անվարան  
նետուեցանիք Պայտարին մէջ... (էջ 74)



թեան . . . եւ հոգ չէ՛, սլիտի զոհուխմ այս նպատակին համար:

**ՊԵՐՃ.** — Պատի՛ւ այս երիտասարդին . . . եւ պատի՛ւ ցեղին ոգւոյն:

**ԶԱՊԵԼ.** — Գնա՛, սիրելիս, գոհ սրբով զնու: Մի՛ խորհիր թէ քեզի սպասող միայն քոյր մը եւ անկեղծ սիրող մը ունիս, այլ յաջողութեանդ համար երկու ջերմեռանդ աղօթողներ եւս:

**ՊԵՐՃՈՒՀԻՆԻ.** — Եղբայր, թէ որ մեր հովիւը տակաւին կ'ապրի վստահ եմ անիկա քեզի կ'օգնէ:

**ՊԵՐՃ.** — Մեր հովիւին կը նմանի եղեր:

**ԶԱՄԵՀ.** — Քո՛յր, ես մինակ Աստուծոյ օգնութեան կարօտ եմ: (Համբուրելով զանոնի) Մնաք բարով: (Դրան դառնալով ինքնիրեն) Գոհ եմ, որ վերջապէս պատեհութիւնն ունեցայ նուիրական պարտականութիւնս կատարելու հանդէպ անդուժական եղբօրս, որ ոչ ես է . . . (Կը քալէ դէպի դուռ՝ այն կողմէն, ուր Պերճ եւ Ալիս նստած են):

**ՊԵՐՃ.** — (Զարեհին դէմը վազելով) Կեցի՛ր, ո՛վ ասպետ հայրենակից, համբուրեմ այդ աղնուական ճակատդ, եւ հիացումս հետդ տար: (Զարեհին հետ դէմ դիմաց պահ մը զիրար յոտից ցզուխ սուր կերպով դիտելէ վերջ) **Զարե՛հ . . .**

**ԱԼԻՍ.** — **Զարե՞հ . . .**: (զարմացած) **Ի՞նչ կը լսեմ:**

**ԶԱՄԵՀ.** — **Եղբա՛յր . . .**: (Կը գրկուին):

**ՊԵՐՃՈՒՀԻՆԻ.** — **Եղբա՞յր . . .**: (Կը վազէ դէպի Պերճ):

**ԱԼԻՍ.** — (Պերճուհին գրկելով) **ՊԵՐՃՈՒՀԻ՛ . . .**:

**ՊԵՐՃ.** — **ՊԵՐՃՈՒՀԻ՞ . . .**:

**ՊԵՐՃՈՒՀԻՆԻ.** — **Ալի՛ս . . .**:

**ԶԱՄԵՀ.** — **Ալի՞ս . . .**:

**ԱԼԻՍ.** — **Այո,** ո՛վ կտրիմ եղբայր, ամէն ինչ հրաշալիօրէն պարզուեցաւ: (Խոնարհելով Զարեհին առջեւ) **Պարծանքով կը խոնարհեցնեմ դլուխս քու**

առջեւ, որ երեք\* տարի շարունակ չէր զիջանած բոնակալներու արիւնթաթախ սուրերուն:

**ԶԱՊԻԼ.** — (Ի տես այս տեսարանին ռուարած)

**ԶԱՄԵՀ.** — ԶԵ՛, դիւցազն քոյր, ես արժանի չեմ այդ պատւոյն, երբ նա կը մատուցուի ինձ անկէ, որմէ ես սորված եմ կոռուիլ ու գոհուիլ: (Յարգանքի շարժում մը ընելով) Քեզի կը վայելէ այս բոլորը, դուն ես իրական հերոսը: Բնդունէ, յարգանքս ու հիացումս:

Պահ մը խորհրդաւոր լոռութիւնէ վերջ, սեղանին ռուրջ բոլորուած կը նստին խիստ հանդարտօրէն:

**ԶԱՊԻԼ.** — Զարե՛հ, այս ի՞նչ անակնկալ էր, որ պատահեցաւ:

**ՊԵՐՃ.** — Կրնա՞մ օրիորդին հետ ծանօթանալ:

**ԶԱՄԵՀ.** — Այո՛, եղբայր, մօտաւորապէս երեք տարի է անծանօթ անապատներուն մէջ՝ դիալուածով իրարու հանդիսակեցանք եւ անկէ ի վեր տառապանքի ընկերներ ենք: Ասկէ վերջն ալ գիտես . . . : Իր անունը Զապէլ է:

**ՊԵՐՃ.** — Հասկցայ, եղբայր: Նախ կը շնորհաւորեմ ձեզ ձեր միութիւն խոստանալուն համար»: (Զապէլին ձեռքը սեղմելով) Եւ պարծանքով կը սեղմեմ այս ձեռքը, որ պահ մը առաջ քեզ պարտականութեան կը մղէր:

**ԶԱՊԻԼ.** — Շնորհակալ եմ:

**ԱԼԻՍ.** — (Նմանապէս ձեռքը սեղմելով) Աչքովս տեսայ քեզ, ո՛վ քոյր, որ քու սիրականդ ճամրու կը դնէիր աներեւոյթ քրոջ մը սիրոյն համար՝ քու անուշ լեզուովդ համոզելով զայն: Ես քեզի երախտապարտ եմ:

**ԶԱՊԻԼ.** — Քաւ լիցի դուն քոյրս ես:

\* Ալիսին ազատութիւնը տեղի ունեցաւ զինադադարէն առաջ:



## Ե. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆՔ, ԳԵՂԱՄ, ՎԱՀԵ ԵՒ ՀԱՅՐԻԿ

ԳԵՂԱՄ, ՎԱՀԵ ԵՒ ՀԱՅՐԻԿ կը վերադառնան:

**ՎԱՀԵ.** — (Դրան մէջէն պոռալով) ՊԵՐՃ, ուրիշ երազ մը եւս չես տեսնե՞ր:

**ԳԵՂԱՄ.** — Այն երազն էր որ մեզ հոս առաջնորդեց: Եթէ երազ մը եւս տեսնէ՝ Եղիայի հրավառ կառքով մեզ երկինք կը փոխադրէ:

**ՎԱՀԵ.** — ՊԵՐՃ, ներսը մեր հայրենակիցներէն շատեր տեսանք եւ մեր ընտանիքներէն հաստատ լուր առինք, որոնք քաղաքին մէկ ուրիշ մասը կը բնակին: Տոմարին մէջ աղջկայ մը ու երիտասարդի մը անունները կը յիշուին, որոնց հնչումը ճիշդ քու անուանդ կը նմանի: Երիտասարդը ամբողջ քէմփին մէջ մեծ ժողովուրդականութիւն կը վայելէ եղեր, չկա'յ մէկ մը որ զինքը չճանչնայ:

**ՊԵՐՃ.** — Ահաւասի՛կ, հոս են անոնք, (Զապէլը ցոյց տալով) ուրիշ պատուական քրոջ մը հետ:

**ՀԱՅՐԻԿ.** — Զարեհը քու եղբա՞յրդ է:

**ՊԵՐՃ.** — Այո՛, հայրիկ:

**ՀԱՅՐԻԿ.** — Փառք Աստուծոյ:

**ՎԱՀԵ.** — Բայց, այս ի՞նչ կերպարանք է:

**ՊԵՐՃ.** — Իր ճամբուն վրայ բռնեցի զինքը, որ կ'երթար գործ մը կատարելու, որ երեքս միասին դժուարաւ կրցանք գլուխ հանել: (Զարեհին) Եղբայր, այդ ծանր զէնքդ ու պայուսակդ վար առ եւթեւերդ շոկէ, որ հանդստանաս:

**ԶԱՐԵՀ.** — (Քաղցր ժպիտով մը գլուխը շարժելով) Ո՛չ այնքան ծանր, որքան էին դարերու ընթացքին մեր կրած շղթաները: Մեր հանգիստը այս զէնքերուն մէջ փնտուելու ենք ասկէ վերջ:

**ՊԵՐՃ.** — Բայց, ահաւասիկ Ալիսը, որ ազատելու կ'երթայիր:

**ԶԱՐԵՀ.** — Ատիկա նպատակներուս գերազոյնն էր միայն . . .

**ՊԵՐՃ.** — Ուրիշ:

**ԶԱՐԵՀ.** — Պէտք է տապալի նաեւ այն վատը:

**ԱԼԻՍ.** — Տարի մըն է անոր տապալելուն, ո'վ սիրելի եղբայր:

**ԶԱՐԵՀ.** — Քու դահի՞ճդ:

**ԱԼԻՍ.** — Այո՛:

**ԶԱՐԵՀ.** — Տակաւին հօրս ջարդարարը, մայրս հարուածներու տակ մահացնողն ու քոյլս ծախողը, եւ ձեռքերս կապելով աչքերէս արիւն ժայթքեցնող ճիւաղները կ'ապրին:

**ՊԵՐՃ.** — Զարե՛հ, պաշտելի եղբայր, այս վսեմ նպատակդ ու ահեղ պայքարդ իմն ալ է: Պիտի հետեւիմ քեզի մի՛նչեւ մահ:

**ՎԱՀԵ.** — (Թեւերը սոքքելով) Զիս ալ համրեցէ՛ք, տղաք:

**ԳԵՂԱՄ.** — (Նմանապէս) Զիս ալ մի՛ մոռնաք:

**ՊԵՐՃՈՒՀԵ.** — (Եղանակով) Հուրրա՛, Հուրրա՛, Հայ զինուորին սուրը շողշողայ: Զիս ալ . . .

Բոլորը կը խնդան:

**ԱԼԻՍ.** — Թո՛ղ խոնարհին մեր գլուխները այն հերոսներուն առջեւ, որոնք վրէժինդրութեան համար կ'ապրին:

**ԶԱՊԵԼ.** — Յարդանք անոնց, որոնք այս ոգւով կը սնանին:

Քեմփէն երգի ճայներ կը լսուին:

**ԳԵՂԱՄ.** — Պերճ, տես սա ուրախութիւնն ու բերկրութիւնը: Ազատ Հայաստան հաստատեր, դրօշակի տիրացեր եւ բանակներ կազմած ենք, որուն մէկ կենդանի օրինակը հոս ներսն է իր դպրոցովը, եկեղեցիովը, թատրոնովն ու լսարանովը:

**ՊԵՐՃ.** — ԱՇ, իցիւ թէ հայրս ու մայրս իրենց կենդանի աչքերովը անգամ մը տեսած ըլլային այս օրը, որ շարունակ իրենց երազն էր:

**ՊԵՐՃՈՒՀԻ.** — Եղբա՛յր, անոնց արեան փոխարէն թանկագին բան մը շահեցանք, որ գուցէ չունենայինք, եթէ անոնց պէս շատեր մեռած չըլլային: Կ'ուզեմ անիկա ներկայացնել ձեզի: (Դուրս կը վազէ):

**ՊԵՐՃ.** — Զապէլ, ի՞նչ է, որ կ'ուզէ մեզի ներկայացնել:

**ԶԱՊԷԼ.** — Ես ալ չեմ գիտեր:

## Զ. ՏԵՍԱՐԱՆ

### ՎԵՐՋԱԲԱՆ

Պերճուհի Հայկական Եռագոյնը բարձր բռնած ներս կը մտնէ: Միւսները յարգանօֆ կ'ողջունեն դրօտակը, զինուորական կեցուածքով աչքերնին յառելով անոր:



**ՊԵՐՃՈՒՀԻ.** — (Կ'երգէ)

«Ահա՛ եղբայր, քեզ մի դրօշ  
Զոր իմ ձեռքով գործեցի,  
Գիշերները ես քուն չեղայ.  
Արտասունքովս օծեցի:»


Սթափեցէ՛ք, եղբայրներ, այն սեւ օրերը անցեր են:  
Այսօր ուրախութեան եւ ցնծութեան օրն է՝ քանզի

գերութեան ժանդ շղթաները խորտակուած ու մենք  
ալ մեր դրօշակին տիրացած ենք։ Առէ՛ք, այս նը-  
շանը եւ ջանացէ՛ք բարձր պահել, անոր հովանիին  
տակ մեր գլուխները հանդչեցնելու համար։ Թռ՛դ  
ծածանի Տաւրոսէն մինչեւ Արարատ։

Դրօշակը Զարեհին կը փոխանցուի եւ բոլորը  
միասին կ'երգեն.

«Մեր հայրենիք ազատ անկախ,  
Մեր թշնամին ոտնակոխ.  
Իր քաջ որդւոց սուրբ արիւնով  
Հանեց իր վրէժ, քէն ու ոխ»։

Վարագոյրը կ'իջնէ։



〔 ՎԵՐՋ 〕

## ԱՐՁԱԳԱՆԳ Ա. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

— • —

Ստացալ Զեր «ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ» հրատարակութիւնը, որուն սկարունակութիւնը այնքան ալժմէական եւ հետաքըրք-րական է:

(ՏՐ.) Յ. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ

. . . Հայկական վրէժը Աստուածային արդարութեան չափ գետին մը ունենալու է ամէն հայու սրտին մէջ. իսկ Զեր «ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ» այդ նպատակին սատարող համեստ փոքր դրուագ մըն է, որ կ'արժէ ունենալ ամէն մի հայ իր տան մէջ:

(ՏՐ.) Պ. Պ. ՀԱՅԿ

. . . Զեր այս աշխատասիրութիւնը յաջող գործ մըն է եւ արժանի հայ բեմին վրայ միշտ ներկայացուելու: ԿԱՐԱՊԵՏ Պ. Ա.ՋԱՐԵԱՆ

Կը շնորհաւորեմ Զեր ջանքերը եւ այս անդրանիկ դրական նախայացրիքը:

Ա. ԱՄԻՐԻԱՆԵԱՆ

. . . Ո'չ միայն ամերիկահայութեան այլ բովանդակ հայութեան համար յանձնարարելի հրատարակութիւն մըն է, որ ցոյց պիտի տայ իրենց քոյք ու եղբայրներու յայտնարերած նկարագրի քաջութիւնն ու բարոյական կորովի մեծութիւնը:

«ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ» հայ ժողովուրդին գոյամարտի եւ հոգեկան ապրումներու հարազատ արտայալտիչն է:

Օ. Մ. ԶԱՅԱՐԵԱՆ

«ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ»-ի հեղինակը, Պրն. Քէհեաեան, ապրած ըլլալով գոյութեան պայքարի կեանքը մեծ պատերազմի ողբերգական թուականներուն, ամենակենդանի կերպով կը ներկայացնէ այն դառն փորձառութիւնները, որոնց բովէն անցաւ հայ ժողովուրդը: . . . «ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ» լեփ-լեցուն է սիրային, ընկերային եւ քաջագործութեան տեսարաններով:

«ԹԱՐԳՄԱՆ»


ԽՈՐԷՆ ԳԱԼՈՒՍԵԱՆ


«ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ» կարդալով հպարտ զգացի հայութակ ըլլալս: «ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ» հայ վրէժի երգ մըն է, որ կ'արժէ ամէն հայ ունենալ իր տան մէջ:

ՅԱԿՈԲ ՕՆՆԻԿԵԱՆ


## ՎՐԻՊԱԿ

<i>Էջ</i>	<i>Տող</i>	<i>Սլուալ</i>	<i>Ուղիղ</i>
5	26	ՀԵՂԻՆԱԿ	ՀԵՂԻՆԱԿԼ
6	17	մարդիկը	մարդիկը
15	3	աղաղակենքու	աղաղակներու
49	33	հաւանակութիւնները	հաւանականութիւնները
50	4	դժկամութիւն	դժկամակութիւն
54	29	բակէ	փակէ
59	7	կրնամ	կրնա՞մ
59	22	ճառագոյթին	ճառագայթին
84	34	հանդուժեմ	հանդուրժեմ





[ 70f.]



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220057186